МИКАЭЛ МАЛХАСЯН

MIKAYEL MALKHASYAN

Н А С Е Л Е Н И Е
К А Р С С К О Й О Б Л А С Т И

POPULATION OF KARS OBLAST

ЕРЕВАН – YEREVAN

ИЗДАТЕЛЬСТВО ЕГУ – YSU PRESS

2015

ՄԻՔԱՅԵԼ ՄԱԼԽԱՍՅԱՆ

ԿԱՐՍԻ ՄԱՐԶԻ ԲՆԱԿՉՈՒԹՅՈՒՆԸ

Նվիրվում է Հայոց ցեղասպանության 100-ամյա տարելիցին

ԵՐԵՎԱՆ
ԵՊՀ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ
2015

ՀՏԴ 314:94
ԳՄԴ 60.7+63.3
Մ 163

Տպագրվում է
ԵՊՀ պատմության ֆակուլտետի
գիտական խորհրդի երաշխավորությամբ

Գիտ. խմբագիրներ՝ **ասիստենտ Գ. Բաղալյան**
պ. գ. թ., դոց. Հ. Գրիգորյան

Խմբագիր՝ **Լ. Ասրյան**

Գրախոս՝ **պ. գ. թ., դոց. Հ. Մուրադյան**

Մալխասյան Միքայել

Մ 163 Կարսի մարզի բնակչությունը, -Եր., ԵՊՀ հրատարակչություն, 2015, 80 էջ:

Մենագրությունը ներկայացնում է Կարսի մարզի ժողովրդագրական պատմությունը 1877-1917 թթ., երբ մարզը եղել է Ռուսական կայսրության կազմում: Աշխատանքում վեր են հանված մարզի վարչատարածքային բաժանումների և ժողովրդագրական բնութագրիչների, հատկապես՝ բնակչության էթնիկական կազմի փոփոխությունները և դրանց պատճառները:

Գիրքը կարող է օգտակար լինել պատմաբանների, պատմական աշխարհագրությամբ և ժողովրդագրությամբ զբաղվողների, ուսանողների և ընթերցող լայն շրջանակների համար:

ՀՏԴ 314:94
ԳՄԴ 60.7+63.3

ISBN 978-5-8084-1986-5

© ԵՊՀ հրատ., 2015 թ.
© Մ. Մալխասյան, 2015 թ.

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Սույն մենագրությունը նպատակ ունի քննության առնել Ռուսական կայսրության վարչատարածքային միավոր Կարսի մարզի բնակչության կազմը և թվաքանակի շարժընթացը:

Կարսի մարզը ձևավորվել է 1877-1878 թթ. ռուս-թուրքական պատերազմի հետևանքով Ռուսաստանին անցած հայկական տարածքներից (Էրզրումի վիլայեթի Կարսի գավառը, Չըլդըրի գավառի մեծ մասը և Բասենի արևելյան հատվածը): Մարզի շուրջ 40-ամյա գոյության ընթացքում նկատվել են նրա բնակչության ազգային կազմի որոշակի փոփոխություններ: Ուսումնասիրության շրջանակներում մեր առջև խնդիր ենք դրել՝ ներկայացնելու այդ փոփոխությունները, դրանց պատճառներն ու հետևանքները:

Կարևորել ենք նաև մարզի սահմանների և վարչատարածքային բաժանման մանրամասն ուսումնասիրությունը, ինչը հնարավորություն կընձեռի՝ հստակ պատկերացում կազմելու մարզի և նրա յուրաքանչյուր վարչատարածքային միավորի մասին:

Վերոնշյալ հարցերին հստակ պատասխաններ տալու համար նախևառաջ մանրամասնորեն անդրադարձել ենք ռուսաստանյան վիճակագրական տվյալներին: Դրանց թվում առաջնային տեղ են գրավում Անդրկովկասի մարզային վիճակագրական կոմիտեի կողմից հրատարակված «Свод статистических данных о населении Закавказского края, извлеченных из посемейных списков 1886 г.»[1] վիճակագրական ժողովածուի և Ռուսաստանի 1897 թ. համակայսերական առաջին մարդահամարի[2] տվյալները: Կարևոր վիճակագրական տվյալներ են պարունակում «Кавказский календарь» տարեգրքի որոշ հա-

[1] «Свод статистических данных о населении Закавказского края, извлеченных из посемейных списков 1886 г.», Тифлис, 1893, VII.

[2] «Первая всеобщая перепись населения Российской империи 1897 г., LXIV, Карсская область», Санкт-Петербург, т. 1-2, 1900-04.

մարներ[1], ինչպես նաև Կարսի մարզային վիճակագրական կոմիտեի կողմից հրատարակված «Памятные книжки и адрес-календарь Карсской области»[2] վիճակագրական ժողովածուները:

Արժեքավոր սկզբնաղբյուր է Կյուրեղ վարդապետ Սրապյանի հեղինակած «Ստորագրութիւն Կարսի շրջակայ գիւղօրէից եւ վանօրէից 1878»[3] աշխատանքը: Հեղինակը, կատարելով Ամենայն Հայոց Կաթողիկոս Գևորգ Դ Կոստանդնուպոլսեցու (1866-1882 թթ.) հատուկ հանձնարարությունը, 1877-1878 թթ. ռուս-թուրքական պատերազմից անմիջապես հետո մեկնել է Կարսի գյուղեր և, մանրամասն տեղեկություններ հավաքելով տեղերում, գրել այս աշխատանքը[4]: Մեր ուսումնասիրության համար կարևոր է յուրաքանչյուր բնակավայրում բնակվող հայերի թվաքանակը: Նույն ժամանակաշրջանում Կարսի մարզի բնակչության էթնիկական կազմի վերաբերյալ արժեքավոր տեղեկություններ է հաղորդում նաև Ալեքսանդր Երիցյանը[5]:

Այս սկզբնաղբյուրների հաղորդած տվյալները համադրելիս փորձել ենք բաց չթողնել ոչ մի փաստ՝ միևնույն ժամանակ ստուգելով այս կամ այն վիճակագրական տվյալի ստույգությունը:

Սկզբնաղբյուրի նշանակություն ունի նաև Երեմիա Տևկանցի «Ճանապարհորդություն Բարձր Հայք և Վասպուրական 1872-1873 թթ.»[6] ուղեգրական աշխատանքը, որը հնարավորություն է տալիս՝

---

[1] «Кавказский календарь на 1902 г.», Тифлис, 1901.
«Кавказский календарь на 1913 г.», Тифлис, 1912.
«Кавказский календарь на 1914 г.», Тифлис, 1913.
«Кавказский календарь на 1915 г.», Тифлис, 1914.
«Кавказский календарь на 1916 г.», Тифлис, 1915.
«Кавказский календарь на 1917 г.», Тифлис, 1916.

[2] «Памятные книжки и адрес-календарь Карсской области», Карсъ, 1901-1914.

[3] **Կյուրեղ վրդ. Սրապյան,** Ստորագրութիւն Կարսի շրջակայ գիւղօրէից եւ վանօրէից 1878, «ԲՀԱ», 1970, թիվ 2, էջ 89-124:

[4] Այս աշխատության մեջ չի խոսվում Արդահանի և Օլթիի շրջանների գյուղերի մասին:

[5] **Ерицов А.,** Список населенных пунктов бывшей Эрзерумской области, находившейся во временном управлении России, «Известия Кавказского отдела», т. 8, Тифлис, 1884-85.

[6] **Երեմիա Տևկանց,** Ճանապարհորդություն Բարձր Հայք և Վասպուրական 1872-73 թթ., ծանոթագր.՝ Հ. Պողոսյան, Երևան, 1991:

պատկերացում կազմելու Կարսի մարզի բնակչության ազգային կազմի մասին Ռուսական կայսրությանը միացվելու նախօրյակին:

Կարսի մարզի բնակչության ազգային կազմը, տարածքն ու սահմանները ճշգրտելու համար սկզբնաղբյուրների կողքին մեծ տեղ ենք հատկացրել նաև ռուսալեզու զանազան ուսումնասիրությունների, որոնց շարքում կարելի է առանձնացնել Պ. Խելմիցկիի[1] և Ա. Պողոսյանի[2] աշխատանքները: Միևնույն ժամանակ կարևորություն ենք տվել Ֆ. Բրոքհաուզի և Ի. Եֆրոնի հրատարակած հանրագիտական բառարանին[3], որը, տպագրվելով խնդրո առարկա ժամանակաշրջանում, նույնպես կարևոր սկզբնաղբյուրի արժեք ունի:

Կարսի մարզի տարածքի՝ Ռուսական կայսրությանը միացվելու նախօրյակին հայության թվաքանակի մասին պատկերացում կազմելու մասին օգտվել ենք Յա. Մալամայի[4], Ա. Մելքոնյանի[5] և Հ. Մուրադյանի[6] աշխատանքներից:

Հայերեն ուսումնասիրությունների շարքում մեծապես օգտվել ենք Ա. Հակոբյանի «Կարսի մարզ»[7], «Կարսի մարզի ազգաբնակչությունը (1897-1914 թթ.)»[8] և այլոց աշխատանքներից:

Բնակավայրերի տեղադրության և անվանումների ճշգրտման գործում մեծ կարևորություն է տրվել ռուսական հրատարակության 5-վերստանոց քարտեզներին[9], ինչպես նաև «Հայաստանի ազգային

---

[1] **Хелмицкий П.,** Карсская область, военно-статистический и географический обзор, ч. 2, Тифлис, 1893, 1897.

[2] **Погосян А.,** Карсская область в составе России, Ереван, 1983.

[3] «Энциклопедический словарь Ф. А. Брокгауза и И. А. Ефрона», т. 14 А (28), Санкт-Петербург, 1895.

[4] **Малама Я.,** Описание Эрзерумского вилайета, Санкт-Петербург, 1874.

[5] **Մելքոնյան Ա.,** Էրզրում. Էրզրումի նահանգի հայ ազգաբնակչությունը 19-րդ դարի առաջին երեսնամյակին (պատմաժողովրդագրական ուսումնասիրություն), Երևան, 1994:

[6] **Մուրադյան Հ.,** Կարսի նահանգի վարչաժողովրդագրական նկարագիրը 19-րդ դարի առաջին երեսնամյակին, Երևան, 2006: **Նույնի** Ժողովրդագրական տեղաշարժերը Կարսի նահանգում XVI-XIX դարի առաջին կեսին, «Պատմության հարցեր», հ. 5, Երևան, 2005, էջ 61-76:

[7] **Հակոբյան Ա.,** Կարսի մարզ (գյուղացիության պատմության ուրվագծեր), Երևան, 2000:

[8] **Հակոբյան Ա.,** Կարսի մարզի ազգաբնակչությունը (1897-1914 թթ.), «ՊԲՀ», 1976, թիվ 4, էջ 147-154:

[9] «Карсская область» (планшет 5-верстовой карты Карсской области), Ростов-на-Дону, 1922.

ատլաս»-ի երկրորդ հատորին[1], որոնցում մանրամասնորեն գրանցված են մարզի բնակավայրերը:

Վերը հիշատակված աղբյուրներում և ուսումնասիրություններում առկա փաստական ու վիճակագրական հարուստ նյութի ամբողջական վերլուծությունը մեզ հնարավորություն է տվել՝ լուսաբանելու 40 տարիների ընթացքում մարզի բնակչության թվաքանակի, ազգային կազմի լուրջ փոփոխությունները և դրանց հիմքը: Ըստ որում, աշխատանքը շարադրելիս մեր առջև խնդիր ենք դրել՝ ներկայացնելու ժողովրդագրական բնութագրիչների միայն ընդհանուր պատկերը և շարժընթացը:

Հարկ ենք համարում նշել, որ սույն մենագրության բովանդակային հիմքն են դարձել Կարսի մարզի ժողովրդագրության վերաբերյալ 2011-2014 թթ. մեր կողմից հրատարակված մի քանի հոդվածներ[2]:

---

[1] «Հայաստանի ազգային ատլաս», հ. Բ, Երևան, 2008:

[2] **Մալխասյան Մ.,** Կարսի մարզի բնակչությունը մարզը Ռուսական կայսրությանը միացվելու նախօրյակին, «Պատմություն և մշակույթ», 2011, թ. Բ, էջ 187-194: **Նույնի** Կարսի մարզի հույն բնակչությունը 1880-1917 թթ., «Հոբելյանական գիտական նստաշրջանի հոդվածների ժողովածու» (ԵՊՀ պատմության ֆակուլտետի 90-ամյակին նվիրված), Երևան, 2011, էջ 72-76: **Նույնի** Կարսի մարզի ռուս բնակչությունը 1877-1917 թթ., «ՈՒԳԸ գիտական հոդվածների ժողովածու», հ. 1, Երևան, 2012, էջ 158-164: **Նույնի** Կարսի մարզի թուրք բնակչությունը 1877-1917 թթ., «ՈՒԳԸ գիտական հոդվածների ժողովածու», հ. 3. Հասարակական գիտություններ, Երևան, 2012, էջ 201-204: **Малхасян М.,** Восточно-славянское население Карсской области в 1878-1917 гг., «Материалы Международного молодежного научного форума «Ломоносов-2011», Москва, 2011.

ԳԼՈՒԽ Ա

ԿԱՐՍԻ ՄԱՐԶԻ ՏԱՐԱԾՔԸ, ՍԱՀՄԱՆՆԵՐՆ ՈՒ ՎԱՐՉԱՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԲԱԺԱՆՈՒՄԸ

1877-1878 թթ. ռուս-թուրքական պատերազմի սկզբում՝ 1877 թ. ապրիլ-մայիս ամիսներին, ռուսական բանակը Կովկասյան ռազմաճակատի հայաստանյան հատվածում գրավում է Բայազետը, Ալաշկերտը, Կաղզվանը, Արդահանը և այլ տարածքներ, նոյեմբերին՝ Կարսը, իսկ հաջորդ տարվա փետրվարին՝ Էրզրումը[1]:

Ռազմական գործողությունների թեժ շրջանում ստեղծվում է Կարսի մարզը, որն անցել է ձևավորման երկու փուլ: 1877 թ. նոյեմբերի 6-ին ռուսական բանակը՝ հայազգի գեներալ Հովհաննես Լազարևի (Լազարյան) գլխավորությամբ, գրավում է Կարսի բերդը: Հետաքրքրական է, որ արդեն 1877 թ. նոյեմբերի 1-ին հատուկ հրամանագրով ստեղծվում է Կարսի մարզը: Փաստորեն, մարզը իրավական տեսանկյունից ձևավորվել է ավելի վաղ, քան այն անցել է Ռուսական կայսրությանը:

Սան-Ստեֆանոյի պայմանագրով Արևմտյան Հայաստանում Ռուսական կայսրությանն անցան Կարսը, Արդահանը, Բայազետը, Ալաշկերտը և մինչև Մեծրաց (Սողանլուղ) լեռներ ընկած տարածքը՝ թուրքական կողմում թողնելով Էրզրումը: Հետագայում Բեռլինի կոնգրեսում ռուսական կողմը պարտավորվեց Օսմանյան կայսրությանը վերադարձնել նաև Ալաշկերտը և Բայազետը[2]:

Այսպիսով, Կարսի մարզը, ստեղծվելով 1877-1878 թթ. ռուս-թուրքական պատերազմի ընթացքում, իր մեջ էր ներառում Ռուսաստանին անցած հայկական մի շարք տարածքներ՝ Էրզրումի վիլայեթի

---

[1] Տե՛ս «Հայ ժողովրդի պատմություն», ՀԽՍՀ ԳԱ հրատ., հ. VI, Երևան, 1981, էջ 101-103:

[2] Տե՛ս «Հայաստանը միջազգային դիվանագիտության և սովետական արտաքին քաղաքականության փաստաթղթերում (1828-1923 թթ.)», խմբ.՝ Ջ. Կիրակոսյանի, Երևան, 1972, էջ 93-94, 127:

Կարսի գավառն ամբողջությամբ, Բասենի արևելյան հատվածը և Չըլդըրի գավառի մեծ մասը: Կարսի մարզի փաստացի ստեղծումը (1878-1883 թթ.) վարչամիավորի ձևավորման երկրորդ փուլն է:

Կարսի մարզի ձևավորման երկու՝ իրավական և փաստական փուլերին ուշադրություն դարձնելիս կնկատենք, որ Ռուսական կայսրությունն արդեն պատերազմի ընթացքում ունեցել է վերջնական արդյունքի հնարավոր սցենարը, այսինքն՝ տարածքային զիջումները ոչ միայն Ռուսաստանի և արևմտյան տերությունների միջև դիվանագիտական խաղերի արդյունք էին, ինչպես ընդունված է համարել պատմագիտական գրականության մեջ, այլև նախապես ծրագրված քայլեր: Նման պնդման օգտին է խոսում այն փաստը, որ Ռուսական կայսրությունը ռազմական գործողությունների ընթացքում է սկսում Կարսի մարզի ձևավորման գործընթացը, մինչդեռ գրված մյուս տարածքներում միայն ռազմավարչական ժամանակավոր իշխանություն էր հաստատվում: Փաստորեն, Կարսի մարզի ստեղծումը Ռուսական կայսրության տարածաշրջանային քաղաքականության ծրագրերի մեջ է մտել առնվազն նախքան Կարսի բերդի գրավումը:

Կարսի մարզի տարածքը համապատասխանում էր աշխարհացույցյան Մեծ Հայքի՝ ստորև նշված աշխարհների համապատասխան գավառների տարածքներին[1].

1. *Այրարատ աշխարհի* Վանանդ գավառը, Գաբեղյանք, Արշարունիք, Աբեղյանք և Հավնունիք գավառների մեծագույն մասը, Շիրակի արևմտյան, Բասենի արևելյան և Աշոցքի արևմտյան հատվածները,
2. *Գուգարաց աշխարհի* Արտահան (Արդահան) գավառի մեծագույն մասը,

[1] Աշխարհացույցյան Մեծ Հայքի աշխարհներին ու նրանց գավառներին համապատասխանեցումն ինքներս ենք կատարել՝ համեմատելով Կարսի մարզի («Հայաստանի ազգային ատլաս», հ. Բ, էջ 82, քարտեզ՝ «Արևելյան Հայաստանը XX դ. սկզբին (1901 - 1914 թթ.)», հեղինակ՝ Բ. Հարությունյան, մասշտաբ՝ 1:1 600 000) և աշխարհացույցյան Մեծ Հայքի (Նույն տեղում, էջ 30-31, քարտեզ՝ «Հայաստանն ըստ «Աշխարհացոյց»-ի», հեղինակ՝ Բ. Հարությունյան, մասշտաբ՝ 1:2 300 000) քարտեզները:

3. *Տայոց աշխարհի* Կող և Բերդաց փոր գավառները, Պարտիզաց փոր և Ճակք գավառների արևելյան և կենտրոնական հատվածները, Բողխա և Ազորդաց փոր գավառների հյուսիսարևելյան մասը:

Ընդհանուր առմամբ՝ Կարսի մարզը զբաղեցնում էր 16 384,8 վերստ^2, այսինքն՝ 18 646,9 կմ^2 տարածք, որից 134,98 կմ^2 զբաղեցնում էին լճերը (Չըլդըր, Աղգյոլ, Արփի ևն)[1]: Մարզն զբաղեցնում էր հյուսիսային լայնության 30°55[1] - 41°37[1] և արևելյան երկայնության 41°50[1] - 43°50[1] միջև ընկած տարածքը[2]: Կարսի մարզի տարածքի բացարձակ միջին բարձրությունը մոտ 1 500 մետր էր[3]:

Կարսի մարզի տարածքի հիմնական մասը կազմում էր Կարսի սարահարթը, որին բնորոշ է ցամաքային կլիման՝ ձմռանը մինչև -35°C նվազագույն ջերմաստիճանով[4]: Մարզի տարածքում առավելագույն ջերմաստիճանը նկատվել է Կաղզվանում (առավելագույնը՝ 35°C): Տարածքի կլիման մեղմացնում են նրա տարածքով հոսող գետերը՝ Ճորոխի վտակ Օլթին, Կուրն՝ իր Փոցխով և այլ վտակներով, Արաքսը՝ իր Ախուրյան վտակով, իսկ վերջինս էլ՝ իր Կարս, Տեկոր և այլ վտակներով: Կան նաև բազում ջերմուկներ:

Ջրային ռեսուրսներից զատ՝ մարզի տարածքը հարուստ է քարածխի (Օլթիի շրջան), կերակրի աղի, կապարի, պղնձի և մարմարի (Կաղզվանի և Օլթիի շրջաններ) պաշարներով:

Սահմանները: Կարսի մարզը հյուսիսում, արևելքում և հարավարևելքում սահմանակից էր Ռուսական կայսրության վարչամիավորներին, իսկ հարավում և արևմուտքում՝ Օսմանյան կայսրությանը (Էրզրումի նահանգ), որի հետ սահմանն անցնում էր Հայկական պար ու Սողանլուղի լեռնաշղթաներով և Օլթի գետի միջին հոսանքով ու

---

[1] «Энциклопедический словарь Ф. А. Брокгауза и И. А. Ефрона», т. 14 А (28) , с. 481. Քառակուսի կիլոմետրերով հաշվարկն ինքներս ենք կատարել (1 վերստ^2 = 1,13806224 կմ^2, հաշվարկային հիմքը տե՛ս՝ «Большая советская энциклопедия», т. 4, Москва, 1971, էջ 549):

[2] «Հայկական սովետական հանրագիտարան», հ. 5, Երևան, 1979, էջ 346:

[3] «Первая всеобщая перепись населения Российской империи 1897 г.», т. 2, с. III (Краткий обзор цифровых данных по Карсской области).

[4] «Հայաստանի բնաշխարհ» հանրագիտարան, Երևան, 2006, էջ 28:

նրա վտակներով[1]: Կարսի մարզի սահմանի երկարությունը Օսմանյան կայսրության հետ 294 կմ էր[2]:

Ռուսական վարչամիավորներից Կարսի մարզը հյուսիս-արևմուտքում սահմանակցում էր Բաթումի մարզի Արդվինի և Բաթումի շրջաններին, հյուսիսում՝ Թիֆլիսի նահանգի Ախալցխայի գավառին, հյուսիս-արևելքում՝ Թիֆլիսի նահանգի Ախալքալաքի գավառին, արևելքում՝ Երևանի նահանգի Ալեքսանդրապոլի և Էջմիածնի գավառներին, իսկ հարավ-արևելքում՝ Երևանի նահանգի Սուրմալուի գավառին: Կարսի մարզը Երևանի նահանգից սահմանաբաժանվում էր Ախուրյան և Արաքս գետերով[3]:

Վարչատարածքային բաժանումը: 1878 թ. դեկտեմբերի 27-ին Կովկասյան փոխարքայության կողմից հաստատվում է «Կարսի մարզի կառավարման կանոնադրությունը»: Կարսի մարզը բաժանվում է վարչական 6 շրջանների (ռուս.՝ «округ»)՝ Արդահանի, Զարիշատի, Կաղզվանի, Կարսի, Շորագյալի, Օլթիի և 3 գավառակների (ռուս.՝ «приставство»)՝ Փոցխովի, Չըլդըրի, Խորասանի[4]: Կարսի մարզի վարչական կենտրոն է հաստատվում Կարս քաղաքը:

Օսմանյան տիրապետության տարիներին ցեղային առաջնորդներով էին կառավարվում քրդական զիլանցի, ջամալդանցի և կասկանցի ցեղերը, որոնք օսմանյան վարչատարածքային բաժանումներում առանձնացվում էին՝ որպես ինքնուրույն վարչամիավորներ: Այժմ դրանք ենթարկվում են Ռուսական կայսրության վարչատարածքային բաժանմանը՝ մտցվելով ռուսական վարչամիավորների կազմի մեջ[5]: Փաստորեն, ցեղային իշխանությունները վերացվում էին. համընդհանուր միասնական և միօրինակ վարչական համակարգ ու կառավարում էր մտցվում:

Այսպիսով, «Համայն Ռուսիոյ ինքնակալը» և ռուսաստանյան վարչական համակարգը նպատակ ունեին՝ վարչատարածքային բա-

---

[1] «Հայաստանի ազգային ատլաս», հ. Բ, էջ 82:

[2] **Погосян А.,** с. 13.

[3] «Հայաստանի ազգային ատլաս», հ. Բ, էջ 82:

[4] **Погосян А.,** с. 63.

[5] Նույն տեղում, էջ 64:

ժանումների միջոցով միանգամից ամրապնդելու իրենց իշխանությունը նոր նվաճված բոլոր տարածքներում:

1881 թ. կատարվեց վարչական նոր բաժանում՝ Զարիշատի և Շորագյալի շրջանները մտցվեցին Կարսի շրջանի կազմի մեջ՝ որպես ոստիկանական տեղամասեր: Կարսի մարզը բաժանվում է վարչական 4 շրջանների՝ Արդահանի, Կաղզվանի, Կարսի, Օլթիի, որոնք բաժանվում էին ոստիկանական 14 տեղամասերի, վերջիններս՝ գյուղական շրջանների (թուրք.՝ *մերքեզ),* իսկ դրանք էլ իրենց հերթին՝ գյուղական 148 համայնքների: Հարկ է նշել, որ ռուսաբնակ, էստոնաբնակ և գերմանաբնակ բնակավայրերը չէին մտնում մարքյազների մեջ՝ առանձնացվելով որպես ինքնուրույն գյուղական համայնքներ և բնակավայրեր[1]:

Կարսի շրջանը գտնվում էր Կարս գետի հոսանքում՝ զբաղեցնելով մարզի կենտրոնական և հյուսիսարևելյան մասերը[2]:

Կաղզվանի շրջանը գտնվում էր Արաքս գետի 2 ափերին և Ախուրյան գետի ստորին հոսանքի ձախ ափին՝ զբաղեցնելով մարզի հարավարևելյան, հարավային և հարավարևմտյան մասերը[3]:

Արդահանի շրջանը գտնվում էր Կուր գետի վերին հոսանքում՝ զբաղեցնելով մարզի հյուսիսային մասը[4]:

Օլթիի շրջանը գտնվում էր Օլթի գետի ավազանում՝ զբաղեցնելով մարզի արևմտյան մասի կենտրոնական և հյուսիսային շրջանները[5]:

1883 թ. հունիսի 27-ին վերջնականապես հաստատվում է 1881 թ. կատարված վարչատարածքային բաժանումը[6]: Այսպիսով, վերահաստատվում է մարզի բաժանումը վարչական 4 շրջանների և ոստիկանական 14 տեղամասերի:

---

[1] **Погосян А.,** с. 64.

[2] «Հայաստանի ազգային ատլաս», հ. Բ, էջ 82:

[3] Նույն տեղում:

[4] Նույն տեղում:

[5] Նույն տեղում:

[6] **Հակոբյան Ա.,** Կարսի մարզ, էջ 24:

Վարչական շրջանների և ոստիկանական տեղամասերի քանակն ու սահմաններն անփոփոխ մնացին մինչև Ռուսական կայսրության կործանումը (1917 թ.), այսինքն՝ մինչև վարչամիավորի գոյության ավարտը: Այնուհանդերձ, սա ամենևին չի նշանակում, թե Կարսի մարզի՝ Ռուսական կայսրությանը պատկանելու տարիներին նրանում վարչատարածքային ոչ մի վերաբաժանում չի եղել: Եթե 1881 թ. մարզի գյուղական համայնքների քանակը 148 էր, ապա 1904 թ.՝ 196[1], իսկ 1913 թ.՝ 238[2]: Այսպիսով, գյուղական համայնքների քանակն անընդմեջ մեծանում էր՝ 1913 թ. 1881 թ. համեմատությամբ ավելանալով 1,6 անգամ:

Վարչատարածքային նման վերաբաժանումները պայմանավորված էին դեպի մարզի տարածք բնակչության անընդմեջ ներհոսքով և ցարիզմի գաղութային քաղաքականությամբ, որն ուղղված էր տնտեսական և ռազմաքաղաքական տեսանկյուններից մարզի տարածքը յուրացնելուն:

Այսպիսով, տնտեսապես և ռազմաքաղաքականապես յուրացնելով Կարսի մարզի տարածքը՝ ցարական իշխանությունները նպատակ ունեին այն հենակետ դարձնել՝ Մերձավոր Արևելքում հետագա նվաճումներ իրականացնելու համար, ուստի պատահական չէր ցարիզմի կողմից մարզի համար ընտրված կառավարման ձևը:

«Կարսի մարզի կառավարման կանոնադրությամբ» մարզը կառավարվում էր զինվորական նահանգապետի կողմից, ով ենթարկվում էր Կովկասյան բանակի հրամանատարին[3]: Սա նշանակում է, որ մարզում մշտապես տեղ է գտել ռազմական, այլ ոչ թե քաղաքացիական կառավարում: Կարսի մարզում առհասարակ բացակայում էին Ռուսական կայսրության նահանգներին բնորոշ քաղաքացիական կառավարման շատ տարրեր, ինչն արտահայտվեց նաև դատական

---

[1] **Погосян А.,** с. 66.

[2] Նույն տեղում, էջ 67:

[3] Կարսի մարզի առաջին նահանգապետ է նշանակվել գեներալ-լեյտենանտ Ի. Պոպկոն: Ընդհանուր առմամբ՝ մարզի գոյության մոտ 40 տարիների ընթացքում միմյանց են հաջորդել 9 նահանգապետեր, որոնցից վերջինը գեներալ-լեյտենանտ Պ. Պարկաուն է եղել (Տե՛ս նույն տեղում, էջ 63):

համակարգում: Թուրքական դատական համակարգը վերացվեց, և ստեղծվեցին դասային ու կայսերական դատարաններ[1]:

Այսպիսով, Ռուսական կայսրության կազմում ներառված Կարսի մարզի ներքին վարչատարածքային բաժանումը ձևավորվեց 1881 թ. և ընդհանուր գծերով գրեթե անփոփոխ պահպանվեց մարզի գոյության ընթացքում[2]:

Ռուսաստանում Հոկտեմբերյան հեղաշրջումից հետո թուրքական բանակի՝ դեպի Այսրկովկաս արշավանքի արդյունքում 1918 թ. ապրիլի 12-ին Կարսը գրավվում է թուրքերի կողմից: Շուտով Կարսի մարզի ողջ տարածքը նույնպես զավթվում է օսմանյան բանակի կողմից, տեղի հայությունը ենթարկվում է սոսկալի ջարդերի:

Մուդրոսի զինադադարից (1918 թ. հոկտեմբերի 30) հետո՝ 1919 թ. ապրիլին, այն անցնում է Հայաստանի Հանրապետության իշխանությունների վերահսկողության տակ: Այնուհանդերձ, թուրք-հայկական երկրորդ պատերազմի ընթացքում՝ 1920 թ. հոկտեմբերին, Քեմալական Թուրքիան նորից զավթում է Կարսի մարզը: Մարզի տարածքի մեծագույն մասը վերջնականապես բռնակցվում է Թուրքիային Մոսկվայի (1921 թ. մարտի 16) և Կարսի (1921 թ. հոկտեմբերի 13) պայմանագրերով:

Հետաքրքրական է, որ 1920 թ. դեկտեմբերի 2-ի լույս 3-ի գիշերը ՀՀ և Թուրքիայի միջև կնքված Ալեքսանդրապոլի պայմանագրով նախատեսված էր, որ Շորագյալի տեղամասի մի քանի գյուղեր՝ Տիգնիս (պայմանագրում՝ Տիքնիս), Մեծ Ղմլու (պայմանագրում՝ Մեծ Կամո) և Ղըզըլ-դաշ (պայմանագրում՝ Կիզիլտա), պետք է թողնվեին ՀՀ սահմաններում, մինչդեռ Մոսկվայի և Կարսի պայմանագրերով նախանշված սահմանագիծը թուրքական կողմում էր թողնում նշված գյուղերը[3]: Բ. Հարությունյանը նման փոփոխությունը բացատրում է

---

[1] **Погосян А.,** с. 67-68.

[2] Կարսի մարզի վարչատարածքային միավորների ամբողջական ցանկը (տարածքը, բնակչության թիվը, վարչական ներքին բաժանումը, հայաբնակ գյուղերը ևն) տե՛ս «Հավելված»-ում (էջ 72):

[3] Տե՛ս «Հայաստանը միջազգային դիվանագիտության և սովետական արտաքին քաղաքականության փաստաթղթերում», էջ 505, 684:

Խորհրդային Ռուսաստանի և Թուրքիայի միջև տարածքային փոխանակման վերաբերյալ նախապես կայացված համաձայնությամբ: Ըստ նրա՝ 3000 կմ^2 տարածք զիջելով Վրաստանին Բաթումի մարզից և նվաճելով Սուրմալուի գավառը, որի տարածքը 3750 կմ^2 էր, Թուրքիան պետք է Խորհրդային Ռուսաստանի ազդեցության գոտում գտնվող հանրապետություններին զիջեր 750 կմ^2 տարածքային տարբերությունը, ինչն արվել է ի հաշիվ Կարսի մարզի Աղբաբայի ոստիկանական տեղամասի (տարածքը՝ 608 կմ^2) և վերը նշված 3 գյուղերի (տարածքը՝ 140-142 կմ^2)[1]: Այդուհանդերձ, այդ գյուղերը ևս հանձնվել են Թուրքիային՝ փոխարենը Նախիջևանի ինքնավար շրջանի հատվածում Խորհրդային Հայաստանին վերադարձնելով շուրջ 150 կմ^2 տարածք[2]:

Այսպիսով, Խորհրդային Հայաստանին (և հետևապես ներկայիս Հայաստանի Հանրապետությանը) Կարսի մարզից թողնվեց մի չնչին հողակտոր՝ Արփի լճի ավազանը զբաղեցնող Աղբաբայի ոստիկանական տեղամասը, որը ներկայումս ՀՀ Շիրակի մարզի Ամասիայի տարածաշրջանն է:

---

[1] Տե՛ս **Հարությունյան Բ.,** Ալեքսանդրապոլի և Մոսկվայի պայմանագրերի համադրական քննության շուրջ, «ՊԲՀ», 2011, թ. 3, էջ 51-61:

[2] Տե՛ս նույն տեղում, էջ 57-58:

ԳԼՈՒԽ Բ

ԿԱՐՍԻ ՄԱՐԶԻ ԲՆԱԿՉՈՒԹՅՈՒՆԸ

Ժողովրդագրական գործընթացների համառոտ բնութագիրը մինչև Կարսի մարզի ստեղծումը: Կարսի մարզի գոյության ընթացքում (1877-1917 թթ.) նրա բնակչության թիվը և ազգային կազմը մեծ փոփոխություններ են կրել. բնակչությունն ավելացել է շուրջ 2,5 անգամ, ընդ որում՝ հայերի թվաքանակն ավելացել է մոտ 6 անգամ: Ռուսական կայսրության գաղութային քաղաքականության շրջանակներում հազարավոր ռուսներ, հույներ, լեհեր, ուկրաինացիներ և եվրոպական այլ էթնիկական հանրությունների ներկայացուցիչներ վերաբնակեցվել են մարզի տարածքում: Այս փոփոխությունների և, ընդհանրապես, մարզի բնակչության էթնիկական պատկերն ընկալելու համար անհրաժեշտ է նախ և առաջ հետադարձ հայացք գցել Կարսի մարզի՝ դեռևս Օսմանյան կայսրության կազմում գտնվելու ժամանակներին, քանի որ էթնիկական խմբերի տեղաշարժերը կատարվել են հիմնականում այդ ժամանակաշրջանում:

Մինչև 16-րդ դ. Կարսի մարզի բնակչությունը կազմված էր գրեթե բացառապես հայերից: 16-18-րդ դդ. այստեղ են հաստատվում թուրքերի և քրդերի խմբեր: Չդիմանալով օսմանյան ծանր լծին, նոր հարևանների հալածանքներին ու տնտեսական աննպաստ պայմաններին՝ հայերի հոծ խմբեր հեռանում են այդ տարածքից: Տեղի բնակչության և մասնավորապես հայ բնակչության նվազման վրա զգալի ազդեցություն թողեց Օսմանյան կայսրության և Սեֆյան Պարսկաստանի միջև 1555 թ. մայիսի 29-ի Ամասիայի հաշտության պայմանագիրը, որով Կարսի շրջանն առանձնացվեց՝ որպես ամայացված չեզոք գոտի երկու տերությունների միջև: Չեզոք գոտու սահմաններն արևելքում հասնում էին մինչև Ախուրյան գետ, հարավում՝ Կաղզվանից հարավ, հյուսիսում՝ Զարիշատից հյուսիս (Չըլդըր լճից հարավ), արև-

մուտքում՝ Օլթի գետից արևելք ընկած տարածքները[1]: Փաստորեն, չեզոք գոտու սահմանները հիմնականում համընկնում էին ապագա Կարսի մարզի սահմաններին: Այս փաստը մեզ հնարավորություն է տալիս տեսնելու հայ բնակչության զանգվածային տեղահանության հիմնական պատճառը 16-րդ դ. կեսերին:

Կարսի շրջանի հայ բնակչությունը քանիցս ենթարկվել է բռնագաղթերի. 1604 թ. օգոստոսին պարսից շահ Աբաս 1-ինի կողմից կազմակերպված հայ բնակչության զանգվածային բռնագաղթից անմասն չմնացին Կաղզվանի, Կարսի, Զարիշատի և Շիրակավանի (Շորագյալ) շրջանները[2]: 1735 թ. պարսից Նադիր խանը (1736 թվից՝ Պարսկաստանի շահ) կազմակերպում է Կարսի, Կաղզվանի, Բասենի շրջանների հայ բնակչության զանգվածային բռնագաղթ[3]: Նադիր շահը 1744 թ. անձամբ արշավում է Կարսի շրջան՝ բռնագաղթի ենթարկելով նախորդ բռնագաղթից հետո տեղում մնացած բնակչության մեծ մասին[4]:

16-18-րդ դդ. Կարսի էյալեթին բնորոշ է եղել ոչ միայն թուրքական և քրդական էթնիկ խմբերի հաստատումն ու հայ բնակչության զանգվածային արտագաղթը, այլև հայ բնակչության մահմեդականացման գործընթացը: Օլթիի և Արդահանի շրջաններում բնակվող տասնյակ հազարավոր հայեր տասնամյակների ընթացքում մահմեդականություն են ընդունել[5]: 17-18-րդ դդ. հիշյալ շրջաններում հայ

---

[1] **Մալխասյան Մ.,** Օսմանյան կայսրության և Սեֆյան տերության առաջացումն ու հզորացումը. Հայաստանը 15-17-րդ դարերում, «Քրիստոնյա Հայաստան», 2010, թ. 16, էջ 8:

[2] Տե՛ս **Առաքել Դավրիժեցի,** Պատմություն, թարգմանությունը, առաջաբանը և ծանոթագրությունները՝ Վ. Առաքելյանի, Երևան, 1988, էջ 40-41: Հարկ է նշել, որ, համադրելով սկզբնաղբյուրներում առկա տեղեկությունները, համոզվել ենք, որ Արդահանի և Օլթիի բնակչությունը բռնագաղթի չի ենթարկվել (Տե՛ս **Առաքել Դավրիժեցի,** էջ 40-41: «Հայաստանի ազգային ատլաս», հ. Բ, էջ 51, քարտեզ՝ «Հայերի բռնագաղթը Շահ-Աբաս I-ի կողմից Պարսկաստան XVII դ. սկզբին», հեղինակ՝ Գ. Բաղալյան):

[3] Տե՛ս **Աբրահամ Կրետացի,** Պատմութիւն անցիցն իւրոց եւ Նատր-շահին Պարսից, քննական բնագիր, ռուսերեն թարգմանությունը, առաջաբանը և ծանոթագրությունները՝ Ն. Ղորղանյանի, Երևան, 1973, էջ 67-68:

[4] Տե՛ս **Զուլալյան Մ.,** Արևմտյան Հայաստանը 16-18-րդ դդ., Երևան, 1980, էջ 104-109:

[5] **Melkonyan A.,** The Kars Oblast՛ 1878-1918: Establishment of Russian Rule, տե՛ս «Հայաստանի պատմության և ժողովրդագրության հիմնահարցեր», Երևան, 2011, էջ 441:

բնակչության բռնի մահմեդականացման մասին են վկայում ոչ միայն գրավոր սկզբնաղբյուրները, այլ նաև թյուրքացված տեղանունների հայկական արմատները[1]:

Մահմեդականացմանը զուգահեռ 19-րդ դ. սկզբին սկսվում է մի գործընթաց, երբ ռուս-թուրքական և ռուս-պարսկական պատերազմների ընթացքում բնակչության ազգային կազմում և առանձին բնակավայրերի էթնիկական նկարագրում տեղի են ունենում կտրուկ փոփոխություններ. մեծ թվով մահմեդականներ Ռուսական կայսրությանն անցնող տարածքներից հեռանում են դեպի Օսմանյան կայսրության սահմաններում գտնվող Կարսի էյալեթի տարածք, և, ընդհակառակը, մեծ թվով հայեր էյալեթի տարածքից հաստատվում են Ռուսական կայսրությանն անցած տարածքներում: Թե՛ 1804-1813 թթ. ռուս-պարսկական, թե՛ 1806-1812 թթ. ռուս-թուրքական և թե՛ 1820-1823 թթ. թուրք-պարսկական պատերազմների հետևանքով, փաստորեն, Կարսի էյալեթում տեղի են ունենում էթնիկական խմբերի տեղաշարժեր, որոնց հետևանքով ամայանում են հայաբնակ բազմաթիվ գյուղեր[2]:

Չնայած վերոնշյալ բոլոր գործընթացներին՝ այնուհանդերձ, ինչպես եզրակացրել է Հ. Մուրադյանը (հենվելով հիմնականում օտար հեղինակների վկայությունների վրա), հայերը շարունակում էին զգալի կշիռ ունենալ բնակչության մեջ[3]:

1826-1828 թթ. ռուս-պարսկական և 1828-1829 թթ. ռուս-թուրքական պատերազմների ընթացքում ևս տեղի են ունենում ժողովրդագրական զգալի փոփոխություններ Կարսի էյալեթում. կրկին ակտիվանում է հայ բնակչության՝ դեպի ռուսահպատակ հայկական տարածքներ և մահմեդական բնակչության՝ դեպի օսմանահպատակ տարածքներ տեղափոխվելու գործընթացը[4]:

---

[1] Տե՛ս **Սահակյան Լ.,** Տեղանունների թուրքացումն Օսմանյան կայսրությունում և հանրապետական Թուրքիայում, Մոնրեալ, 2010, էջ 27-48:

[2] Տե՛ս **Մուրադյան Հ.,** Կարսի նահանգի վարչաժողովրդագրական նկարագիրը 19-րդ դարի առաջին երեսնամյակին, էջ 106-140:

[3] Տե՛ս նույն տեղում, էջ 105-140:

[4] Տե՛ս նույն տեղում, էջ 140-162:

1828-1829 թթ. ռուս-թուրքական պատերազմի ընթացքում ռուսական բանակը գրավում է Կարս քաղաքը (1828 թ. հունիսի 23), սակայն Ռուսաստանը ստիպված է լինում 1829 թ. սեպտեմբերի 2-ին Ադրիանապոլսում կնքված պայմանագրով թուրքերին վերադարձնել այն: Միևնույն ժամանակ այդ պայմանագրի 13-րդ հոդվածով երկու կողմերի հպատակներն իրավունք էին ստանում՝ տեղափոխվելու մյուս կայսրության սահմանները[1]: Պարզ է, որ այս կետից օգտվելու էին նախևառաջ օսմանահպատակ հայերը, մասամբ էլ՝ հույները և եզդիները[2]:

Եվ ահա, 1829-1830 թթ. շուրջ 12,3 հազար հայ ընտանիքներ, այսինքն՝ շուրջ 74 հազար հայեր Էրզրումի և Կարսի էյալեթների ու Բայազետի փաշայության տարածքից տեղափոխվում են Ռուսական կայսրության սահմաններ (Արևելյան Հայաստան՝ Ալեքսանդրապոլի, Թալինի և Ապարանի շրջաններ, Ախալքալաք և Ախալցխա)[3]: Հարկ է նշել, որ Արդահանի շրջանը մտնում էր ոչ թե Կարսի, այլ Ախալցխայի (1828-1829 թթ. պատերազմից հետո, այսինքն՝ Ախալցխան ռուսներին հանձնելուց հետո՝ Չըլդըրի) էյալեթի կազմի մեջ, ուստի Կարսի մարզի տարածքից Ռուսական կայսրության սահմաններում վերաբնակվածների թվում պետք է հաշվառել նաև Արդահանից գաղթած հայերին: Եթե այս մոտ 80 հազար հայերի վերաբնակեցումը դրական նշանակություն ունեցավ խիստ հայաթափված Արևելյան Հայաստանի բնակչության էթնիկական նկարագրի բարելավման համար, ապա խիստ բացասաբար անդրադարձավ Էրզրումի էյալեթի, Բայազետի փաշայության և, մասնավորապես՝ Կարսի էյալեթի բնակչության էթնիկական պատկերի վրա, քանի որ այն զգալիորեն հայաթափվեց: Ա. Մելքոնյանի հաշվարկով արևմտահայ վերաբնակիչներից 2,5 հազարը Կարսից և հարակից տարածքներից էին[4]: Ավելին, հայկական լքված կամ մասնակիորեն դատարկված բնակավայրերն աս-

---

[1] Տե՛ս «Հայաստանը միջազգային դիվանագիտության և սովետական արտաքին քաղաքականության փաստաթղթերում», էջ 80-81:

[2] **Մելքոնյան Ա.,** էջ 144:

[3] Նույն տեղում:

[4] **Melkonyan A.,** p. 438.

տիճանաբար զբաղեցվում էին քրդերի, կարափափախների և մահմեդական էթնիկական այլ խմբերի կողմից[1]: Շուտով Կարսի էյալեթի և Ռուսաստանին սահմանակից մյուս վարչամիավորների տարածքում սկսում են հաստատվել նաև զգալի թվով հայեր՝ ապագայում Ռուսական կայսրության սահմաններն անցնելու մտադրությամբ: Ըստ Երեմիա Տևկանցի հաղորդած տեղեկությունների՝ Կարսի շրջակա գյուղերը լքած հայության փոխարեն այստեղ են հաստատվում մեծ թվով հայ գաղթականներ Մուշի, Ալաշկերտի, Բասենի և Կարինի հայկական գյուղերից՝ կազմելով Կարսի էյալեթի հայ բնակչության մեծ մասը[2]:

1830-ական թթ. Ռուսական կայսրության տարածքից, հիմնականում Բորչալուի ու Ղազախի շրջաններից և մասամբ Պարսկաստանից Կարսի էյալեթի տարածք են տեղափոխվում թյուրքալեզու կիսաքոչվորական խմբերի հազարավոր ներկայացուցիչներ, որոնք երկար ժամանակ բնակվելով վրացիների հարևանությամբ՝ նրանցից ընդօրինակել էին ոչխարի սև բրդից գլխարկներ (փափախներ) կրելը՝ ստանալով կարափափախ (ռուս.՝ «карапапах») անվանումը: Նրանք հաստատվում են հիմնականում Աղբաբայում և Շորագյալում[3]:

1830-1850-ական թթ. Կարսի էյալեթի տարածքում, մասնավորապես Օլթիի և Արդահանի շրջաններում բնակվող հայերի շրջանում շարունակվում է բռնի մահմեդականացման գործընթացը: Նույն ճակատագրին են արժանանում նաև այդ տարածքներում բնակվող վրացիները[4]: Այս երևույթը հանգեցրեց նրանց թրքացմանը, և հետագա բոլոր վիճակագրական տվյալներում նրանք գրանցվել են որպես թուրքեր: Նրանց բնակավայրերի հայկական և վրացական անվանումները ենթարկվում են անվանափոխության՝ ստանալով թուրքական, քրդական, արաբական և պարսկական վերջավորություններ՝ հովիտ→դարա→դերե, եկեղեցի→քիլիսա→ քիլիսե, շեն→քյանդ→քենդ և այլն:

---

[1] **Melkonyan A.,** p. 438.

[2] **Երեմիա Տևկանց,** էջ 78:

[3] **Хелмицкий П.,** 1893, с. 34-35.

[4] Նույն տեղում, էջ 10:

Արևելյան (Ղրիմի) պատերազմից (1853-1856 թթ.) հետո՝ 1850-ական թթ. վերջերին, շարունակվում են միգրացիոն անկանոն գործընթացները Կարսի էյալեթում: Այսպես, էյալեթի Փոքր Նախիջևանի շրջանն են տեղափոխվում շուրջ 350 տուն (այսինքն՝ մոտ 2,15 հազար մարդ)[1] քրդեր, որոնք զբաղեցնում են Ախուրյան գետի հովտի՝ երբեմնի Բագրատունյաց Անի մայրաքաղաքի մերձակա Մաղասբերդից (Մաղազբերդ) մինչև Կողբի գավառն ընկած տարածքը[2]: Այսպիսով, փոքր-ինչ մեծանում է քրդական էթնիկական տարրի տեսակարար կշիռը Կարսի էյալեթի տարածքում[3]:

Կովկասյան պատերազմից (1817-1864 թթ.) հետո՝ 1860-1870-ական թթ., Հյուսիսային Կովկասից Օսմանյան կայսրության տարածք են վերաբնակվում հազարավոր «չերքեզներ»՝ հյուսիսկովկասյան մահմեդական տարբեր ցեղերի և ժողովուրդների խմբեր (հատկապես՝ մահմեդական օսեր և դաղստանյան էթնիկական հանրությունների ներկայացուցիչներ): Թերեքի մարզից (Թերեք գետի ավազան) և Դաղստանից «չերքեզների» հոծ խմբեր են հաստատվում Կարսի մարզի տարածքում, հիմնականում՝ Մեծրաց լեռների շրջանում (Սողանլուղ)[4]:

Այսպիսով, թուրքական տիրապետության ժամանակաշրջանում՝ 16-19-րդ դդ., Կարսի ապագա մարզի տարածքում հայերի թիվը շարունակաբար նվազել է, իսկ մահմեդականներինը (թուրքեր, քրդեր, կարափափախներ, մահմեդականացված հայեր և վրացիներ, հյուսիսկովկասյան լեռնականներ)՝ ավելացել:

Ահա այսպիսիք էին Կարսի մարզի բնակչության էթնիկական պատկերի փոփոխությունները Ռուսական կայսրությանը միացվելու նախօրյակին: Ընդհանուր առմամբ, ըստ Յա. Մալամայի հաղորդած

---

[1] Հաշվարկն ինքներս ենք կատարել՝ օգտագործելով 1886 թ. ծխական վիճակագրության համաձայն քրդական ընտանիքի միջին մեծության գործակիցը՝ 6,1:

[2] **Երեմիա Տևկանց,** էջ 85:

[3] 16-րդ դ. -19-րդ դ. կեսերը Կարսի նահանգում բնակչության էթնիկական կազմի փոփոխությունների վերաբերյալ մանրամասն տե՛ս՝ **Մուրադյան Հ.,** Ժողովրդագրական տեղաշարժերը Կարսի նահանգում XVI-XIX դարի առաջին կեսին, էջ 61-76:

[4] **Хелмицкий П.,** с. 36-37.

տվյալների, Կարսի մարզի տարածքում 1874 թ. դրությամբ 150-160 հազար մարդ էր բնակվում[1]: Եթե վստահենք այս տվյալին, ապա 1877 թ. բնակչության թիվը կհասներ 160-165 հազարի: Այնուհանդերձ, հակված ենք կատարելու մեր հաշվարկը՝ Կարսի մարզի տարածքի բնակիչների թվաքանակը 1877 թ. սկզբի դրությամբ ստանալու համար: Այսպես, 1877 թ. կեսերից սկսվեց մահմեդական բնակչության արտագաղթը: Օսմանյան իշխանությունները փորձ կատարեցին՝ բանակ զորակոչելու կարափափախներին: Վերջիններս չհնազանդվեցին, և նրանց զգալի մասն ընտանիքներով տեղափոխվեց Պարսկաստան[2]:

Մահմեդականների արտագաղթը սկսեց մեծ ծավալներ ընդունել 1879 թ. հունվարից, քանի որ թուրքերը և մյուս մահմեդական էթնիկական խմբերի մեծ մասը չէին ցանկանում ենթարկվել ռուսական վարչակարգին և օրենքներին: 1879 թ. փետրվարի 9-ին Կոստանդնուպոլսում կնքված ռուս-թուրքական համաձայնագրի 27-րդ հոդվածով նրանք իրավունք են ստանում՝ 3 տարվա ընթացքում լքելու Կարսի մարզի տարածքը: Ռուսական կայսրությունն ապահովում է մահմեդականների արտագաղթն արագացնելու բոլոր անհրաժեշտ պայմանները, և մինչև 1881 թ. օգոստոսի 1-ը Կարսի մարզից հեռանում են 82,76 հազար մահմեդականներ[3]:

Քանի որ 1886 թ. մահմեդականների թվաքանակը Կարսի մարզում շուրջ 106 հազար[4] էր, ապա, ի նկատի ունենալով 82,76 հազար մարդու հեռանալու հանգամանքը և բնական աճի բարձր տեմպերն ու արտագաղթի որոշակի ծավալը մահմեդական բնակչության շրջանում[5], 1877 թ. նրանց թիվը կազմում էր մոտ 35 հազար: Մահմեդա-

---

[1] Տե՛ս **Малама Я.,** էջ 20-21: Ի դեպ, Յա. Մալամայի տվյալները Կարսի բնակչության թվի վերաբերյալ հայ պատմագիտության մեջ շրջանառության մեջ է դրել Ա. Հակոբյանը:

[2] **Погосян А.,** с. 125.

[3] Նույն տեղում, էջ 120-123:

[4] Տե՛ս «Свод статистических данных…», էջ 8: Մահմեդականների քանակն ինքներս ենք հաշվարկել՝ ըստ մահմեդական էթնիկական խմբերի ընդհանուր թվաքանակի:

[5] Հաշվի ենք առել այն հանգամանքը, որ 1877-1881 թթ. արտագաղթած մահմեդական բնակչության մի մասը (շուրջ 10 հազար մարդ), ելնելով սոցիալ-տնտեսական պայմաններից, վերադարձել է Կարսի մարզ:

կան բնակչության թվաքանակի աճի համար ընդունելի ենք համարել տարեկան շուրջ 3,2 % գործակիցը (հիմնվելով 1886-1914 թթ. բնական աճի շարժընթացի վրա), ինչի հիման վրա էլ կատարել ենք հետադարձ հաշվարկ՝ ստանալով Կարսի մարզում մնացած մահմեդականների թիվը 1877-1878 թթ. ռուս-թուրքական պատերազմից առաջ: Այստեղ հաշվի ենք առել նաև այն հանգամանքը, որ կարափափախների զգալի մասը (մոտ 15 հազար մարդ) իրենց ընտանիքներով 1877 թ. հեռացել էր Պարսկաստան, և միայն 1877-1878 թթ. ռուս-թուրքական պատերազմի ավարտից մի քանի տարի հետո (1881-1886 թթ.) էր վերադարձել Կարսի մարզ (արդեն անցնելով 20 հազարից): Հաշվի ենք առել նաև այն հանգամանքը, որ շուրջ 10 հազարի հասնող թուրքմենների գերակշիռ մեծամասնությունը Ռուսական կայսրությանը միացվելուց մի քանի տարի հետո էին հաստատվել մարզում[1]: Այսպիսով, 1877 թ. սկզբին Կարսի մարզում բնակվող մահմեդականների թիվը շուրջ 117,5 հազար էր[2]:

Մահմեդական բնակչության թվաքանակը հաշվելուց հետո հաշվարկել ենք հայերի թվաքանակը: Այսպես, Երեմիա Տևկանցի հաղորդած տվյալների համաձայն Կարսի և Բասենի թեմերում համապատասխանաբար 2450[3] և 820[4] հայ ընտանիքներ էին բնակվում: Քանի որ Կարսի մարզի մեջ ընդգրկվեց Բասենի միայն արևելյան կեսը, որտեղ ընդամենը 2 հայաբնակ գյուղ էր մնացել, ուստի ընդհանուր առմամբ կարող ենք միջինը շուրջ 2800 ընտանիք հաշվել: Այսպիսով, մեր հաշվարկներով 1872-1873 թթ. վերոնշյալ տարածքներում շուրջ 22 հազար հայեր էին բնակվում: Այս հաշվարկը կատարելիս ի նկատի ենք առել 7,775 գործակիցը՝ հիմնված Կյուրեղ վարդապետ Սրապյանի վիճակագրական տվյալների վրա (18696 հայ բնակիչ կամ 2405 ընտանիք, հայկական 1 ընտանիքի մեծության միջին գործակիցը՝ 7,775): Վերոնշյալ 22 հազարին գումարելով Արդահանի և Օլթիի

---

[1] Տե՛ս **Погосян А.,** էջ 127:

[2] Այս թիվն ստանալիս հաշվի ենք առել 1877-1881 թթ. մարզից հեռացած 82,76 հազար մահմեդականներին և մոտ 35 հազար առկա մահմեդականներին:

[3] **Երեմիա Տևկանց,** էջ 78:

[4] Նույն տեղում, էջ 113:

շրջաններում բնակվող շուրջ 2 հազար հայերին՝ Կարսի մարզի տարածքի հայ բնակչության թիվը 1872-1873 թթ. դրությամբ կլինի շուրջ 24 հազար:

1878 թ.՝ ռուսական տիրապետության հաստատումից անմիջապես հետո, Կյուրեղ վարդապետ Սրապյանը, շրջելով Կարսի մարզի Կարսի, Կաղզվանի, Շորագյալի և Զարիշատի շրջաններով, հաշվառել է տեղի յուրաքանչյուր հայաբնակ բնակավայրի հայերի թիվը (բացառությամբ Կարս քաղաքի): Ընդհանրացնելով նրա հաղորդած տվյալները՝ ստացել ենք հայերի քանակը Կարսի, Կաղզվանի, Շորագյալի և Զարիշատի շրջաններում 1878 թ. կեսերի դրությամբ՝ 18696 մարդ (2405 ընտանիք)[1]: Այս թվին գումարելով Արդահանի և Օլթիի շրջաններում բնակվող շուրջ 2 հազար հայերին, ինչպես նաև Կարս քաղաքի մոտ 2 հազար[2] հայերին, 1878 թ. կեսերի դրությամբ Կարսի մարզի հայերի թվաքանակը կլինի շուրջ 22,7 հազար[3]: Հաշվի առնելով մեր հաշվարկների արդյունքում ստացված այս 2 քանակական ցուցանիշները՝ 1877 թ. համար կարող ենք ընդունելի համարել հայերի՝ շուրջ 23 հազար թիվը:

Այսպիսով, Կարսի մարզի տարածքում 1877 թ. սկզբին, այսինքն՝ մինչև ռուս-թուրքական հերթական պատերազմի մեկնարկը, շուրջ 142 հազար մարդ էր բնակվում, որից շուրջ 117,5 հազարը (82,75 %)՝ մահմեդականներ, 23 հազարը (16,2 %)՝ հայեր, շուրջ 1,5 հազարը (1,05 %)՝ հրեաներ, ասորիներ, գնչուներ, վրացիներ և այլք:

---

[1] Տե՛ս **Կյուրեղ վրդ. Սրապյան,** էջ 90-123:

[2] Ըստ Երեմիա Տևկանցի հաղորդած տվյալի՝ Կարս քաղաքում շուրջ 250 ընտանիք հայ էր բնակվում (**Երեմիա Տևկանց,** էջ 78): Հաշվի առնելով Կարսի հայերի ընտանիքի միջին մեծության 7,775 գործակիցը՝ կստանանք մոտ 2 հազար թիվը: Հաշվի ենք առել նաև այն հանգամանքը, որ քաղաքաբնակ հայերի շրջանում ընտանիքի միջին մեծության գործակիցը, այսինքն՝ անդամների թիվը ավելի փոքր էր:

[3] Ա. Հակոբյանն իր «Կարսի մարզ (գյուղացիության պատմության ուրվագծեր)» աշխատանքի մեջ (էջ 27) 1878 թ. դրությամբ հայերի թիվը 19446 է ներկայացնում՝ հղում կատարելով 1880 թ. հրատարակված «Сборник сведений о Кавказе» (т. VII) ժողովածուին: Ինչպես տեսնում ենք, մեր հաշվարկներով ստացված թիվը և այս շուրջ 19,5 հազարը միմյանց գրեթե չեն հակասում:

Ա. Պողոսյանն իր ուսումնասիրության մեջ ներկայացրել է Կարսի գեներալ-նահանգապետ Վ. Ֆրանկլինի զեկուցագիրը Կովկասի փոխարքային, որտեղ նա 1879 թ. սկզբի համար նշում է մարզի 101 հազար բնակչության մասին, որոնցից 74 հազարը մինչև օգոստոս ամիսը լքել էին մարզի սահմանները: Մեկ այլ արխիվային փաստաթղթում նշվում է, որ 1880 թ. սկզբին Կարսի մարզում շուրջ 50 հազար մարդ էր բնակվում[1]: Այնուհանդերձ, մենք հակված ենք զեկուցագրային այդ տվյալներին մասամբ վստահելուն, քանի որ նոր հաստատված ռուսական ռազմավարչական իշխանությունները չէին կարող հստակ տվյալներ ունենալ իրենց կողմից նոր նվաճված և օրեցօր էթնիկական փոփոխություններ կրող մարզի բնակչության թվի և էթնիկական պատկերի վերաբերյալ: Հակառակ դեպքում հարց է առաջանում՝ որտեղից «ծլեցին» 1886 թ. հաշվառված շուրջ 106 հազար մահմեդականները: Այդ պատճառով հակված ենք հիմնվելու մեր հաշվարկների արդյունքում ստացված թվերի վրա:

Այսպիսով, Ռուսական կայսրությանը միացվելու նախօրյակին Կարսի մարզի բնակչության մեծ մասը կազմում էին մահմեդական զանազան էթնիկական հանրությունները, իսկ հայերը, ենթարկվելով օսմանյան իշխանությունների միտումնավոր հայաթափման և մահմեդականացման քաղաքականությանը, կորցրել էին դարեր առաջ Կարսի մարզի տարածքում իրենց ունեցած էթնիկական գերակշռությունը:

Մարզի բնակչությունը 1878-1917 թթ.: Ինչպես տեսանք, Ռուսական կայսրությանը միանալու նախօրյակին Կարսի մարզում շուրջ 142 հազար մարդ էր բնակվում: Նրանցից 82,76 հազար մահմեդականներ 1877-1881 թթ. հեռացան Կարսի մարզից, ընդ որում՝ մոտ 13 հազարը՝ միայն Կարս քաղաքից[2]: Ինչպես արդեն նշել ենք, մարզը լքածների թվում էին նաև զգալի թվով կարափափախներ, որոնք, սակայն, պատերազմի ավարտից մի քանի տարի անց վերահաստատվեցին Կարսի մարզում[3]:

---

[1] Տե՛ս **Погосян А.,** էջ 122:

[2] **Хелмицкий П.,** с. 5.

[3] **Погосян А.,** с. 125.

Ի տարբերություն 1829 թ. Ադրիանապոլսի պայմանագրի՝ Սան-Ստեֆանոյի պայմանագրում և Բեռլինի տրակտատում չէր խոսվում արևմտահայերի՝ Ռուսական կայսրության սահմանները զանգվածաբար տեղափոխվելու իրավունքի մասին: Այնուհանդերձ, արևմտահայերի հոծ զանգվածներ, թուրքական իշխանությունների կողմից վրեժի զոհ դառնալու վտանգը կանխազգալով, ցանկություն են հայտնում՝ տեղափոխվելու արդեն ռուսահպատակ Արևելյան Հայաստանի մասը կազմող Կարսի մարզի տարածք: Այս մասին է վկայում Սողանլուղի ռուսական կայազորի պետի 1879 թ. մարտի 9-ի զեկուցագիրը, որում նա հայտնում էր, որ 2 հազար քրիստոնյա, այսինքն՝ հայ ընտանիքներ ցանկանում են հաստատվել Ռուսական կայսրության տարածքում[1]:

Ռուսական իշխանությունները, նպատակ ունենալով նոր նվաճված տարածքը բնակեցնել հավատարիմ էթնիկ տարրով՝ ռուսներով (հիմնականում՝ աղանդավորներ, մասամբ՝ ուղղափառներ) և հավատակից (ուղղափառ) հույներով, չեն կրկնում 1820-ական թթ. վերջերին իրենց կողմից որդեգրված հայահավաքման կարճաժամկետ քաղաքականությունը և թույլ են տալիս միայն սահմանափակ թվով հայ ընտանիքների ներգաղթը Կարսի մարզ, այն էլ՝ միայն Օսմանյան կայսրության տարածքից՝ արգելելով հայերի վերաբնակեցումը Կարսի մարզ Այսրկովկասից: Իսկ 1880 թ. սկսվում է մարզը ռուսներով, հույներով և «հուսալի» այլ էթնոսներով բնակեցնելու գործընթացը:

Կարսի գրավումից անմիջապես հետո ռուսական իշխանությունները Կարսի մարզում դիմում են գաղութային-կայսերապաշտական քաղաքականության: Պատահական չէ, որ ռուս ռազմական վիճակագիր Պ. Խելմիցկին իր աշխատանքում նշում է, որ իրենց համար ամենահուսալի էթնիկ տարրը ռուսներից հետո հույներն են, իսկ մարզի բնիկ էթնիկական տարրը ներկայացնող հայերը թեև հուսալի են, սակայն ոչ հույների նման[2]: Փաստորեն, ռուս ռազմական վիճակագիրը չի թաքցնում, որ Օսմանյան կայսրության սահմանին վերաբնա-

[1] **Погосян А.,** с. 123.
[2] **Хелмицкий П.,** с. 21-22.

կեցումներ կատարելիս ռուսական իշխանությունների համար հույներն ավելի նախընտրելի էթնիկական տարր էին, քան հայերը:

Փաստորեն, ռուսական գաղութային քաղաքականության մեջ էթնիկական հանրության կրոնական պատկանելությունը կարևորություն ուներ, և նույնիսկ միևնույն կրոնը՝ քրիստոնեությունը դավանող հայերի և հույների միջև հուսալիության տարբերությունը չափվում էր՝ ըստ քրիստոնեության տարբեր ուղղությունների: Կրոնական առանձնահատկություններից զատ հաշվի էր առնվում նաև այն հանգամանքը, որ հայերի կոմպակտ կուտակումը մայր հողում կարող է հետագա գլխացավանքի պատճառ դառնալ ռուսական իշխանությունների համար, քանի որ վերջիններս, այնուամենայնիվ, մտավախություն ունեին, որ Օսմանյան կայսրությունում իրենց իրավունքների համար պայքարող հայերը կարող էին նույնատիպ պահանջներով հանդես գալ ռուսական իշխանությունների նկատմամբ: Մայր հողում համախմբումը, վերջին հաշվով, ազգային պետականության վերականգնման գործընթացի հիմքը կարող էր դառնալ հայերի համար, ինչը, բնական է, չէր մտնում ռուսական իշխանությունների ծրագրերի մեջ:

Այսպիսով, առաջնորդվելով սեփական շահերով, ռուսական իշխանությունները թույլատրում են միայն սահմանափակ թվով հայերի ներգաղթը Կարսի մարզ: Մի քանի ամսվա ընթացքում Կարսի մարզում է հաստատվում շուրջ 10 հազար հայ Ալաշկերտի հովտից (500 ընտանիք[1], այսինքն՝ մոտ 3,9 հազար մարդ), Էրզրումի շրջանից, Արևմտյան Բասենից (երկուսը միասին՝ մոտ 6 հազար մարդ[2]), Բայազետից և այլ վայրերից: Այսպիսով, հայերի թվաքանակը 1879 թ. վերջին հասավ շուրջ 33 հազարի:

Խոսելով Կարսի մարզում Ռուսական կայսրության իշխանությունների կողմից գաղութային քաղաքականություն իրականացնելու մասին՝ միաժամանակ անհրաժեշտ ենք համարում նշել, որ, ի տարբերություն օսմանյան տիրապետության ժամանակաշրջանի, այժմ հայերը ֆիզիկական գոյապահպանման հնարավորություն էին ստանում:

---

[1] **Хелмицкий П.,** с. 21.

[2] **Հակոբյան Ա.,** Կարսի մարզ, էջ 27:

Դա պայմանավորված էր մի շարք հանգամանքներով: Նախ ռուսական իշխանության պայմաններում ռազմավարչական համակարգն ավելի հստակ էր, քան Օսմանյան կայսրությունում, ուստի գրեթե իսպառ վերանում էին մահմեդականների կողմից հարձակումները հայկական բնակավայրերի վրա, նրանց կողմից իրականացվող թալանը և նրանց արտոնյալ կարգավիճակը: Այսպիսով, հայերը հնարավորություն էին ստանում *ապրելու* և տնտեսական ու մշակութային գործունեություն ծավալելու Կարսի մարզի տարածքում: Այս համատեքստում, իհարկե, խոչընդոտող հանգամանք էր ռուսական իշխանությունների կողմից արևելասլավոնական բնակչության վերաբնակեցումը[1] մարզի տարածքում և կողմնակալ մոտեցումը հայ վերաբնակիչների նկատմամբ հատկապես 1890-ական թթ.[2]: Այնուհանդերձ, Կարսի մարզը դարձավ Արևելյան Հայաստանում հայահավաքման կարևոր օջախներից մեկը:

Վերոնշյալ բոլոր գործընթացների արդյունքում 1882 թ. Կարսի մարզի բնակչության թիվը, մեր խիստ մոտավոր հաշվարկներով, հասնում է մոտ 156 հազարի, որից հայեր՝ մոտ 35 հազար, մահմեդական այլևայլ էթնիկ խմբեր՝ շուրջ 92 հազար, հույներ՝ մոտ 20 հազար, ռուսներ՝ մոտ 8 հազար[3], այլք՝ շուրջ 1,3 հազար[4]:

1886 թ. մարզի բնակչության թիվը հասնում է 174 հազարի, որից հայեր՝ 37,1 հազար, մահմեդական էթնիկական խմբեր՝ 106 հազար, ռուսներ՝ 10,7 հազար, հույներ՝ 23,5 հազար[5]: 1880-ական թթ. վերջին բնակչության թիվը հասնում է 189,82 հազարի[6], իսկ 1892 թ. հունվարի 1-ին՝ 200,87 հազարի[7]:

---

[1] **Малхасян М.,** с. 2.

[2] Տե՛ս «Ժամանակավորապես բնակվող բնակչությունը» բաժնում (էջ 30-34):

[3] **Հակոբյան Ա.,** Կարսի մարզ, էջ 29:

[4] Այս բոլոր թվերը, բացառությամբ ռուսների թվաքանակի, մեր հաշվարկների արդյունքն են: Հաշվարկը կատարելիս հաշվի ենք առել 1877-1882 թթ. էթնիկական խմբերի միգրացիան և բնական աճի տեմպերը՝ ի նկատի ունենալով նաև 1886 թ. բնակչության ծխական վիճակագրության («Свод статистических данных…») տվյալները:

[5] «Свод статистических данных…», VII, с. 8.

[6] **Хелмицкий П.,** с. 3.

[7] «Энциклопедический словарь Ф. А. Брокгауза и И. А. Ефрона», т. 14 А (28).

1880-1890-ական թթ. շարունակվում է ռուսների և հույների ներգաղթը Կարսի մարզ: Շարունակվում է նաև հայերի ներգաղթը: Համիդյան ջարդերի հետևանքով 1894-1896 թթ. հազարավոր հայեր օսմանահպատակ Արևմտյան Հայաստանից ներգաղթում են Կարսի մարզ: 1897 թ. սկզբին նրանց ընդհանուր թիվը հասնում է 20,24 հազարի[1]: Հույները Տրապիզոնի վիլայեթի տարածքից հաստատվում էին Կարսի մարզում՝ օսմանյան իշխանությունների քաղաքական, տնտեսական և ազգային-կրոնական հալածանքներից ազատվելու համար, իսկ ռուսների վերաբնակեցումը կրում էր «արհեստական» բնույթ, քանի որ այն ռուսական իշխանությունների կողմից գաղութային քաղաքականության իրականացման քայլերից մեկն էր:

1897 թ. Ռուսական կայսրությունում անցկացվում է համառուսաստանյան առաջին մարդահամարը, որի արդյունքների համաձայն՝ Կարսի մարզում 290 654 մարդ էր բնակվում, որից հայ՝ 73,41 հազար, թուրք՝ 63,55 հազար, քուրդ՝ շուրջ 40 հազար, հույն՝ 32,59 հազար, կարափափախ՝ 29,88 հազար, ռուս՝ 22,33 հազար և այլն[2]: Այսպիսով, Կարսի մարզում էր բնակվում Ռուսական կայսրության բնակչության[3] 0,23 %-ը:

Հետագա տարիներին ևս Կարսի մարզի բնակչության թիվն անշեղորեն աճել է: Այսպես, 1910 թ. այն հասնում է 349,67 հազարի[4], 1913 թ.՝ 382,75 հազարի[5], 1914 թ.՝ 391,21 հազարի[6], 1915 թ.՝ 404,41 հազարի[7]: Այսպիսով, մարզի բնակչության միջին տարեկան աճը կազմում էր մոտ 3 %: Եթե բնակչության աճի բարձր տեմպերը 1880-1890-ական թթ. գտնվում էին միգրացիոն գործընթացների զգալի ազդեցության տակ, ապա 1900-1914 թթ. միգրացիոն գործըն-

---

[1] **Հակոբյան Ա.,** Կարսի մարզ, էջ 30:

[2] «Первая всеобщая перепись населения Российской империи 1897 г…», т. 2, с. 34-35.

[3] Ըստ առաջին համառուսաստանյան մարդահամարի՝ Ռուսական կայսրության բնակչության թիվը մոտ 127 միլիոն էր («Первая всеобщая перепись населения Российской империи 1897 г…», т. 1, с. II):

[4] **Погосян А.,** с. 127.

[5] Նույն տեղում:

[6] «Кавказский календарь на 1915 г.».

[7] «Հայկական սովետական հանրագիտարան», հ. 5, էջ 346:

թացները համեմատաբար ավելի փոքր ազդեցություն ունեին Կարսի մարզի բնակչության թվի փոփոխության վրա: Փաստորեն, Կարսի մարզի բնակչության թվի աճի բարձր տեմպերը պայմանավորված էին գերազանցապես բնական աճի բարձր ցուցանիշներով, ընդ որում՝ բնական աճը բարձր էր հատկապես հայերի և մահմեդական էթնիկական հանրությունների շրջանում:

Ուրբանիզացման մակարդակը: Կարսի մարզում 4 քաղաք կար՝ Կարս, Կաղզվան, Արդահան, Օլթի[1], իսկ Սարիղամիշը գյուղաքաղաք էր: Կարսի մարզի ուրբանիզացման մակարդակը 1886 թ. 5,07 %[2] էր, 1890 թ.՝ 4,92 %[3], 1897 թ.՝ 13,02 %[4], 1914 թ.՝ 12,42 %[5]:

«Ժամանակավորապես բնակվող բնակչությունը»: Կարսի մարզի բնակչության մեջ որոշակի թիվ էին կազմում «ժամանակավորապես բնակվողները» (ռուս.՝ «временно проживающее население»): Բնակչության այս մասը բաժանվում էր երեք հիմնական խմբերի.

1. Ռուսական կայսրության այլ վարչամիավորներից, հատկապես՝ Այսրկովկասից Կարսի մարզ էին տեղափոխվում մարդիկ (հիմնականում՝ հայեր), որոնք ցանկանում էին հողակտոր ձեռք բերել, սակայն 1880-ական թթ. կեսերից այլևս հնարավոր չէր հողակտոր տրամադրել, ուստի նրանց այլևս չէին հաշվառում որպես Կարսի մարզի մշտական բնակիչ: 19-րդ դ. վերջին և 20-րդ դ. սկզբին Այսրկովկասից Կարսի մարզ մեկնողները ցանկանում էին ընդգրկվել արդյունաբերական ձեռնարկություններում և երկաթուղաշինության մեջ՝ համալրելով բանվորների շար-

---

[1] Առավել մանրամասն տե՛ս «Հավելված»-ում (էջ 71-78):

[2] «Свод статистических данных…», VII, с. 8. Այս ժողովածուից ներկայացվող տոկոսային հարաբերակցությունը (տեսակարար կշիռը) ցույց տվող բոլոր տվյալները հաշվարկել ենք ինքներս:

[3] **Хелмицкий П.,** с. 5-9. Տեսակարար կշիռը հաշվարկել ենք ինքներս:

[4] «Первая всеобщая перепись населения Российской империи 1897 г…», т. 2, с. 34-35. Մարդահամարի՝ տեսակարար կշիռը ցույց տվող բոլոր տվյալները ինքներս ենք հաշվարկել:

[5] «Кавказский календарь на 1915 г.», с. 234-237. Տեսակարար կշիռը հաշվարկել ենք ինքներս:

քերը: Նրանց նույնպես չէին հաշվառում որպես մշտական բնակիչներ:

2. Ցանկանալով ազատվել օսմանյան ծանր լծից՝ բազմաթիվ հայեր ցանկություն էին հայտնում՝ տեղափոխվելու Ռուսական կայսրության տարածք (Կարսի մարզ): Ինչպես արդեն նշել ենք, համիդյան ջարդերի հետևանքով 1894-1897 թթ. 20,2 հազար հայ Արևմտյան Հայաստանից ներգաղթել է Կարսի մարզ: Նրանք ևս հաշվառման չէին ենթարկվում որպես մարզի մշտական բնակիչներ, քանի որ ռուսական իշխանությունները շահագրգռված չէին հայերի՝ իրենց հայրենի հողերում ամրապնդվելու հարցում:
3. Օտար պետությունների բազմաթիվ քաղաքացիներ ձեռնարկատիրական գործունեություն էին ծավալում Կարսի մարզում՝ հիմնելով արդյունաբերական ձեռնարկություններ և այլն: Նրանք ևս հաշվառվում էին՝ որպես մարզի «ժամանակավոր բնակիչներ»:

Ահա այս 3 «կարգախմբերից» կազմված մարդիկ էլ կազմում էին Կարսի մարզի «ժամանակավոր բնակվող բնակչությունը»: Նրանց թիվը 1897 թ. մարդահամարի ժամանակ 25,8 հազար էր[1], որից 21,26 հազարը՝ Օսմանյան կայսրությունից, 1,32 հազարը՝ Պարսկաստանից, 11-ը՝ Ավստրո-Հունգարիայից և այլ երկրներից տեղափոխվածներ[2]: Նրանց մեջ 3,18 հազարը[3] Ռուսական կայսրության այլ վարչամիավորներից Կարսի մարզի տարածքում «ժամանակավորապես» հաստատված անհատներ էին: Այսպիսով, 1897 թ. «ժամանակավորապես բնակվող բնակչությունը» կազմում էր Կարսի մարզի առկա բնակչության 8,88 %-ը, որից օտարահպատակները՝ մարզի բնակչության 7,78 %-ը[4]:

Հետագա տարիների ընթացքում «ժամանակավոր բնակվողների» թիվը շարունակում է ավելանալ: Այսպես, 1900 թ. նրանց թիվը

---

[1] «Первая всеобщая перепись населения Российской империи 1897 г…», т. 2, с. III.

[2] Նույն տեղում, էջ 33:

[3] Նույն տեղում, էջ III:

[4] Նույն տեղում:

հասնում է 32,71 հազարի, 1907 թ.՝ 37,27 հազարի, 1910 թ.՝ 45,62 հազարի[1], 1913 թ.՝ 49,4 հազարի[2]: Հարկ է նշել, որ համիդյան ջարդերի հետևանքով Արևմտյան Հայաստանից Կարսի մարզում ապաստանած հայերի մի մասը 1897-1900 թթ. հեռանում է մարզից՝ հաստատվելով գերազանցապես Ռուսական կայսրության այլ վարչամիավորներում: Եվ պատահական չէ, որ 1900 թ. մարզի «ժամանակավոր բնակվող» օտարահպատակ հայերի թիվը 18,51 հազար[3] (Կարսի մարզի «ժամանակավոր բնակվողների» 56,59 %-ը) է կազմում, այսինքն՝ մոտ 3 հազարով պակաս, քան 1897 թ.: 1910-1915 թթ. (հատկապես՝ 1914-1915 թթ.) Կարսի մարզի «ժամանակավոր բնակվողների» թիվն ավելանում է ավելի քան 10 հազարով՝ 1915 թ. հասնելով 55,81 հազարի[4], ինչը կազմում էր մարզի առկա բնակչության 13,8 %-ը:

Հետաքրքրական է, որ Կարսի մարզում «ժամանակավոր բնակվողների» զգալի մասը հայեր են եղել: Այսպես, դեռևս 1896 թ. մարզի 17,79 հազար «ժամանակավոր բնակվողներից» 12,33 հազարը (69,34 %-ը) հայեր էին, ովքեր պատսպարվել էին այստեղ համիդյան ջարդերից[5]: Նրանք երկրագործներ և արհեստավորներ էին և այստեղ բնակվում էին տեղացի հայերի կողմից անհատույց տրված կացարաններում՝ գերազանցապես Կարս քաղաքում[6]: Վերաբնակվողների սոցիալական պայմանները խիստ անբարենպաստ էին, և նրանք կարողանում էին իրենց օրահացը վաստակել տեղացի հայերի տրամադրած մանր աշխատանքներով[7]:

---

[1] **Հակոբյան Ա.,** Կարսի մարզի ազգաբնակչությունը, էջ 152:

[2] 1913 թ. Կարսի մարզի 49,4 հազար «ժամանակավոր բնակիչներից» 17,6 հազարը Կարս քաղաքում էին բնակվում, ինչը ավելին էր, քան քաղաքի մշտական բնակչությունը (12,2 հազար մարդ, Տե՛ս «Памятная книжка и адресъ календарь Карсской области на 1914 годъ», Ведомость N 2-й):

[3] **Հակոբյան Ա.,** Կարսի մարզի ազգաբնակչությունը, էջ 152:

[4] «Кавказский календарь на 1917 г.», с. 200-201.

[5] Տե՛ս **Амбарян А.,** Численность и национальный состав «временно-проживающих» в Закавказье и Восточной Армении в 1914 г., «ԼՀԳ», 1979, թ. 8, էջ 38-45:

[6] Տե՛ս նույն տեղում, էջ 38:

[7] Տե՛ս նույն տեղում: Ի դեպ, Ա. Համբարյանը վկայակոչում է այս բոլոր տվյալները՝ ըստ 1897 թ. Կարսում հրատարակված «Обзор Карсской области за 1896 год» վիճակագրական

Առաջին աշխարհամարտի նախօրեին ևս հայերը գերակշռում էին մարզի «ժամանակավոր բնակվող» բնակչության մեջ՝ կազմելով 56,19 %-ը (26,13 հազար մարդ, 1914 թ.)[1]: Զգալի թիվ էին կազմում նաև ժամանակավոր բնակվող քրդերը (8,2 հազար), հույները, ասորիներն ու աբխազները (3,8 հազար), ռուսները (2,3 հազար) և այլք[2]: Տոկոսային հարաբերակցությամբ նրանք շատ ավելի փոքր թիվ էին կազմում ազգակից բնակչության շրջանում, քան հայերը: Հատկանշական է, որ Կարս քաղաքի 17,8 հազար ժամանակավոր բնակվողների 83,77 %-ը հայեր էին (քաղաքի հայ բնակչության կեսից ավելին)[3]:

Ամբողջ Այսրկովկասի ժամանակավոր բնակվողների շրջանում ևս հայերն իրենց թվով գերազանցում էին մյուս էթնոսներին՝ կազմելով ժամանակավոր բնակչության 25,5 %-ը (204,93 հազար մարդ, 1914 թ.), ընդ որում՝ քաղաքային բնակչության շրջանում՝ 30,9 %-ը[4]:

Հարկ է նշել, որ արևելահայկական վարչամիավորներից ամենամեծ թվով «ժամանակավոր բնակվողներ» (46,5 հազար մարդ, որը կազմում էր 391, 21 հազար բնակչության 11,9 %-ը) ուներ հենց Կարսի մարզը[5]: Սովորաբար «ժամանակավոր բնակվողների» առատությամբ աչքի էին ընկնում զարգացած արդյունաբերություն ունեցող շրջանները, ինչպես օրինակ՝ Թիֆլիսի և Բաքվի նահանգները[6], մինչդեռ Կարսի մարզում նրանց մեծ թվաքանակը բացատրվում է առավելապես մարզի՝ Արևմտյան Հայաստանի հետ տարանցիկ սահմանային դիրք ունենալով:

Կարսի մարզի բնակչության մաս կազմող այս ստվար զանգվածի կարգավիճակը պայմանավորված էր Ռուսական կայսրության գաղութային քաղաքականությամբ: Պատահական չէ, որ մարզում

տարեգրքի: Ինչպես նկատել է ուսումնասիրողը, նմանօրինակ տվյալների կարելի է հանդիպել նաև հաջորդող տարիների պաշտոնական հրապարակումներում:

[1] **Амбарян А.,** с. 41. 1914 թ. տվյալները տրվում են ըստ «Кавказский календарь на 1915 г.» (Тифлис, 1914) տարեգրքի:

[2] Տե՛ս նույն տեղում, էջ 41:

[3] Տե՛ս նույն տեղում, էջ 44:

[4] Նույն տեղում, էջ 40:

[5] Նույն տեղում, էջ 42:

[6] Նույն տեղում, էջ 39:

հաստատվող ռուսները և հույներն անմիջապես ստանում էին մշտական բնակչի պետաիրավական կարգավիճակ[1]: Այդ կերպ ռուսական իշխանությունները ցանկանում էին ամուր հենարան ստեղծել ոչ վաղ անցյալում նվաճված Կարսի մարզում, ուստի հայերի չափազանց կոմպակտ կուտակումն ու ամրապնդումը Ռուսական կայսրության համար սահմանային ռազմավարական հենակետ հանդիսացող տարածքում չէր բխում ցարական իշխանությունների շահերից:

Սեռատարիքային կազմը: Հետաքրքիր է նաև մարզի բնակչության սեռատարիքային կազմը: 1897 թ. տղամարդիկ կազմում էին բնակչության 55,25 %-ը, կանայք՝ 44,75 %-ը[2], ընդ որում՝ քաղաքային բնակչության 69,75 %-ը տղամարդիկ էին, իսկ կանայք՝ 30,25 %-ը[3]: 1914 թ. այդ հարաբերակցությունը կազմում էր համապատասխանաբար շուրջ 51,5 % և մոտ 48,5 %[4]:

Փաստորեն, մարզի բնակչության մեծ մասը տղամարդիկ էին, ինչն ինքնին արտահայտում է մարզում ռուսական իշխանությունների կողմից իրականացվող գաղութային քաղաքականությունը: Ռուսական իշխանությունների համար հուսալի տարր համարվող սեփական Ժողովրդի (արևելյան սլավոններ՝ 71,48 %) և իրենց կողմից վերաբնակեցված մյուս եվրոպական էթնոսների (լեհեր՝ 98,92 %, լիտվացիներ՝ 99,1 %, գերմանացիներ՝ 86,05 %, էստոնացիներ՝ 72,09 %)[5] ներկայացուցիչների մեծ մասը Կարսի մարզում տղամարդիկ էին, ովքեր ցանկացած պահին կարող էին ներգրավվել ռազմական գործողություններում:

Մահմեդական բնակչությանն էլ մշտապես բնորոշ է եղել տղամարդկանց գերակշռությունը կանանց նկատմամբ: Այսպես, 1897 թ. տղամարդիկ կազմում էին թուրքերի 51,93 %-ը, քրդերի՝ 52,67 %-ը, կարապափախների՝ 52,13 %-ը, թուրքմենների՝ 51,56 %-ը, թաթար-

---

[1] **Малхасян М.,** с. 2.

[2] «Первая всеобщая перепись населения Российской империи 1897 г…», т. 2, с. 5.

[3] Նույն տեղում, էջ 35:

[4] **Հակոբյան Ա.,** Կարսի մարզի ազգաբնակչությունը, էջ 148: Տեսակարար կշիռը հաշվարկել ենք ինքներս:

[5] «Первая всеобщая перепись населения Российской империи 1897 г…», т. 2, с. 35.

ների՝ 59,14 %-ը ևն[1]: Ընդհանուր առմամբ՝ տղամարդիկ կազմում էին մարզի մահմեդական բնակչության 52,47 %-ը[2]: Փաստորեն, Կարսի մարզի թուրքերը մահմեդական բնակչության շրջանում տղամարդկանց հարաբերական ցուցանիշից ցածր հարաբերակցություն ունեին: Մարզի հրեա, ինչպես նաև վրացի բնակչության մեծ մասը (համապատասխանաբար՝ 94,46 % և 70,91 %) ևս տղամարդիկ էին[3]:

Հարկ է նշել, որ Կարսի մարզի հայերի շրջանում ևս տղամարդկանց թիվը գերազանցում էր կանանց թվին: Մենք հաշվարկել ենք Կյուրեղ վրդ. Սրապյանի հաղորդած տվյալները և ստացել հետևյալ պատկերը. 1878 թ. Կարսի մարզի հայ բնակչության 53,02 %-ը տղամարդիկ էին, 46,98 %-ը՝ կանայք[4]: Գրեթե նույն հարաբերակցության մասին են վկայում 1897 թ. համառուսաստանյան առաջին մարդահամարի տվյալները. 1897 թ. մարզի հայերի 53,15 %-ը տղամարդիկ էին, 46,85 %-ը՝ կանայք[5]: Այնուհանդերձ, մեր հաշվարկները հստակորեն ցույց են տալիս, որ հայ բնակչության շրջանում տղամարդկանց քանակական առավելությունը կանանց նկատմամբ հարաբերական առումով ավելի ցածր է, քան մարզի ընդհանուր բնակչության համապատասխան հարաբերակցությունը, քանի որ, ինչպես արդեն նշել ենք, 1897 թ. մարզի բնակչության 55,25 %-ն էին տղամարդիկ, իսկ հայ բնակչության՝ 53,15 %-ը:

Կարսի մարզի բնակչության տարիքային պատկերը ցույց է տալիս, որ մարզի բնակչության գերակշիռ մասը (շուրջ 80 %-ը) մանուկներ ու երիտասարդներ էին: Այսպես, մինչև 9 տարեկանների տարիքային խումբը կազմում էր բնակչության 29,81 %-ը, 10-19 տարեկան՝ 17,05 %, 20-39 տարեկան՝ 33,98 %, 40-59 տարեկան՝ 13,22 %, 60-79 տարեկան՝ 4,97 %, 80-99 տարեկան՝ 0,85 %, 100 և ավելի՝ 0,08 %[6]:

---

[1] «Первая всеобщая перепись населения Российской империи 1897 г…», т. 2, с. 35.

[2] Նույն տեղում, էջ 39:

[3] Նույն տեղում:

[4] Տե՛ս **Կյուրեղ վրդ. Սրապյան,** էջ 90-123:

[5] «Первая всеобщая перепись населения Российской империи 1897 г…», т. 2, с. 35.

[6] Նույն տեղում, էջ 2-3:

Էթնիկական կազմը: Կարսի մարզի բնակչության ուսումնասիրման մեջ առավել կարևոր խնդիրը էթնիկական պատկերի փոփոխությունների վերհանումն է: Կարսի մարզում, ըստ համառուսաստանյան առաջին մարդահամարի, բնակվում էին շուրջ 45 էթնիկական հանրությունների ներկայացուցիչներ[1]: Նրանց քանակը 1878-1920 թթ. անընդմեջ փոփոխվել է:

Մարզի բնակչության էթնիկական կազմի փոփոխություններն ավելի մանրամասն ցույց տալու համար ստորև ներկայացնում ենք մարզի յուրաքանչյուր էթնիկ հանրության թվաքանակի և բնակության վայրերի փոփոխությունները 1878-1920 թթ.[2]:

ա) Հայեր: Ինչպես արդեն նշել ենք, 1829 թ. Ադրիանապոլսի պայմանագրի կնքումից հետո տասնյակ հազարավոր հայեր Կարսի մարզի տարածքից անցնում են Ռուսական կայսրության սահմաններ: Այդ զանգվածային գաղթի հետևանքով Բասենի 250 հայկական գյուղերի գերակշիռ մեծամասնությունը (220-ից ավելին՝ շուրջ 10 հազար ընտանիք հայ բնակչությամբ) դատարկվում է, և արդեն 1830-ական թթ. կար միայն մոտ 30 հայաբնակ գյուղ[3], իսկ թուրքաբնակ և քրդաբնակ գյուղերի քանակը 1870-ական թթ. սկզբին հասնում է 225-ի[4]:

Նույնն է կատարվում նաև Կարսի թեմում, որի հարյուրավոր հայկական գյուղերից 1872-1873 թթ. հայաբնակ էին մնացել միայն 42-ը: Ռուսական կայսրության սահմանները տեղափոխված հայերի փոխարեն Մուշից, Ալաշկերտից, Բասենից ու Էրզրումի գյուղերից հա-

---

[1] Տե՛ս «Первая всеобщая перепись населения Российской империи 1897 г…», հ. 2, էջ 34-35:

[2] Հարկ ենք համարում նշել, որ, ռուսաստանյան վիճակագրության, օրինակ՝ համառուսաստանյան առաջին մարդահամարի ժամանակ հաշվառումն անցկացվել է ոչ թե անմիջապես ըստ էթնիկական պատկանելության, այլ՝ ըստ լեզվական կամ կրոնական պատկանելության: Կարսի մարզի պատմության հիմնահարցերով զբաղվող ուսումնասիրողները մինչ այժմ իրենց աշխատանքներում էթնիկական պատկանելությունը դիտարկել են ըստ լեզվական պատկանելության, մինչդեռ մենք հակված ենք խնդիրը դիտարկել՝ հաշվի առնելով թե՛ լեզվական և թե՛ կրոնական պատկանելությունը: Նման պայմաններում որոշ էթնիկական խմբերի, օրինակ՝ հրեաների քանակը դիտարկելիս առաջնորդվել ենք ոչ թե լեզվական, այլ կրոնական սկզբունքով:

[3] Գ. Սրվանձտյանի վիճակագրությամբ 1878 թ. հայաբնակ գյուղերի թիվը հասնում էր 44-ի (Տե՛ս **Սրվանձտյան Գ.,** էջ 138):

[4] **Երեմիա Տևկանց,** էջ 113:

զարավոր հայեր տեղափոխվում են Կարսի թեմի տարածք՝ կազմելով նրա հայ բնակչության հիմնական մասը[1]:

1830-1870-ական թթ. ևս շարունակվում է հազարավոր հայերի արտագաղթը հայրենի Կարսից ու Բասենից: Երեմիա Տևականցի վկայությամբ՝ 1872-1873 թթ. Բասենից Կարս ընկած տարածքում ավելի քան 10 հայկական գյուղեր զբաղեցվել էին քրդերի կողմից, իսկ հայերը լքել էին դրանք[2]:

Հարկ է նշել, որ Կյուրեղ վարդապետի հաղորդած տվյալների համաձայն՝ Կարսի, Կաղզվանի, Ծորագյալի ու Զարիշատի շրջաններում 1878 թ. կեսերին կար 46 հայաբնակ բնակավայր (առանց Կարս քաղաքի)[3]:

Ինչպես արդեն նշել ենք, մեր հաշվարկներով, 1877-1878 թթ. ռուս-թուրքական պատերազմի նախօրյակին Կարսի մարզում հայերի քանակը շուրջ 23 հազար էր (մարզի բնակչության 16,2 %-ը), իսկ պատերազմից անմիջապես հետո՝ շուրջ 22,7 հազար:

Փաստորեն, օսմանյան իշխանությունների քաղաքականության հետևանքով շուրջ 100 հազար[4] հայ բնակիչ ունեցող տարածքում մեկ դարից պակաս ժամանակահատվածում հայերի թիվը կրճատվում է 4,5 անգամ՝ նվազելով մինչև 23 հազարի:

Ինչպես արդեն նշել ենք, արևմտահայերի ներգաղթի շնորհիվ 1879 թ. վերջին հայերի թիվը հասնում է մոտ 33 հազարի: 1882 թ.

---

[1] **Երեմիա Տևականց,** էջ 78:

[2] Նույն տեղում, էջ 75:

[3] Տե՛ս **Կյուրեղ վրդ. Սրապյան,** էջ 90-123:

[4] Արդահանի և Օլթիի թուրք բնակչության մեծամասնությունը (մոտ 30 հազար՝ Արդահանի շրջանում, մոտ 15 հազար՝ Օլթիի շրջանում), ինչպես արդեն նշել ենք, թուրքացված հայեր էին, որոնք մահմեդականություն էին ընդունել ընդամենը 16-18-րդ դարերից մինչև իսկ Կարսի մարզի՝ Ռուսաստանին միացվելուց 30 տարի առաջ: Այսպիսով, 18-րդ դ. թուրքացված հայերի թիվը Արդահանի և Օլթիի շրջաններում շուրջ 40 հազար էր: 1829-1830 թթ. մարզի տարածքը լքեցին մոտ 30 հազար հայեր: 18-րդ դ. ողջ ընթացքում շարունակվում էր հազարավոր (ավելի քան 10 հազար) հայերի արտագաղթը: Եթե ի նկատի ունենանք Կարսի մարզի տարածքում բնակվող հայության այս ահռելի կորուստները, ապա դարասկզբի համար կստանանք խիստ մոտավոր շուրջ 100 հազար թիվը:

այդ թիվը հասնում է արդեն մոտ 35 հազարի, ինչը կազմում էր մարզի բնակչության շուրջ 22 %-ը:

1886 թ. կատարված ծխական ցուցակագրության տվյալների համաձայն՝ հայերի թիվը հասնում է 37,1 հազարի[1], ինչը կազմում էր մարզի բնակչության 21,32 %-ը:

1880-ական թթ. վերջին մարզի հայերի թիվը հասնում է 40 հազարի (մարզի բնակչության 21,07 %-ը)[2]: Հայերը կազմում էին Կարսի և Կաղզվանի շրջանների բնակչության մեկ երրորդ մասը: Հայերի 97,5 %-ը (շուրջ 39 հազար մարդ) Հայաստանյայց Առաքելական Սուրբ եկեղեցու հետևորդներ էին, 2,25 %-ը (0,9 հազար)՝ կաթոլիկներ, 0,25 %-ը (0,1 հազար)՝ բողոքականներ[3]:

1892 թ. հունվարի 1-ին մարզի հայերի թիվը հասնում է 43,2 հազարի, որից հայ առաքելական՝ 42,2 հազարը[4]:

Այսպիսով, բնական աճի բարձր տեմպերի և որոշակի թվով ներգաղթի շնորհիվ մարզի հայերի թիվն անշեղորեն աճում էր: Եվ ահա, 1897 թ. հայերի թվաքանակը հասնում է 73,41 հազարի[5], ինչը կազմում էր մարզի բնակչության 25,26 %-ը: Արդեն 1890-ական թթ. կեսերից մարզի հայ բնակչության մեջ որոշակի թիվ են սկսում կազմել «ժամանակավորապես բնակվող» հայերը:

Հարկ է նշել, որ մարդահամարի տվյալների համաձայն՝ հայախոս բնակչությունը մարզում 73,41 հազար էր, մինչդեռ Հայաստանյայց Առաքելական Սուրբ եկեղեցու հետևորդների քանակը՝ 71,12 հազար, հայ կաթոլիկները՝ 1,85 հազար: Այսպիսով, վերջին 2-ը միասին կազմում էին 72,97 հազար, ինչը չի համապատասխանում հայալեզու բնակչության թվին:

Բանն այն է, որ, մարդահամարի տվյալների համաձայն, որոշ թվով օտարալեզու բնակիչներ (42 քրդախոս, 32 ռուսախոս, 24 հունախոս, 5 վրացախոս ևն) Հայաստանյայց Առաքելական Սուրբ եկեղե-

---

[1] «Свод статистических данных…», VII, с. 8.

[2] **Хелмицкий П.,** с. 18-22.

[3] Նույն տեղում, էջ 21:

[4] «Энциклопедический словарь Ф. А. Грокгауза и И. А. Ефрона», т. 14 А (28).

[5] «Первая всеобщая перепись населения Российской империи 1897 г…», т. 2, с. 35.

ցու հետևորդներ էին, իսկ որոշ թվով հայալեզու բնակիչներ էլ՝ այլադավաններ (360 բողոքականներ, 75 կաթոլիկներ (հռոմ.), 68 ուղղափառներ, 55 աղանդավորներ): Սա հայ բնակչության մի մասի՝ այլադավան կամ օտարախոս դառնալու, բայց ինքնության բաղադրատարրերից որևէ մեկը (տվյալ դեպքում՝ լեզվի կամ դավանանքի) պահպանելու արդյունք է:

Հայերը կենտրոնացած էին Կարսի (46,72 հազար մարդ) և Կաղզվանի (21,65 հազար) օկրուգներում (համապատասխանաբար՝ բնակչության 34,83 %-ը և 38,5 %-ը)[1]:

Հետագա տարիներին ևս հայերի թիվը շարունակում է աճել՝ 1906 թ. հասնելով 93,92 հազարի[2], 1910 թ.՝ 101,2 հազարի[3], 1913 թ.՝ 112,47 հազարի[4], 1914 թ.՝ 114,94 հազարի[5], 1915 թ.՝ 123,03 հազարի[6]: 1915 թ. հայերը կազմում էին մարզի բնակչության 30,5 %-ը, այսինքն՝ 1915 թ. հայերի թվաքանակը 1877 թ. համեմատ ավելացել էր մոտ 6 անգամ, իսկ ընդհանուր բնակչության մեջ տոկոսային հարաբերակցությունը՝ մոտ 3 անգամ:

Փաստորեն, չնայած կայսրության գաղութային քաղաքականությանը, Կարսի մարզը դարձավ այն վարչամիավորներից մեկը, որտեղ հավաքվեց կոմպակտ և բազմաքանակ հայություն, ինչի ապացույցն է այն, որ 1913 թ. Կարսի մարզում կար հայաբնակ 90 բնակավայր[7]՝ ընդհանուր շուրջ 112,5 հազար հայ բնակչությամբ:

Այդուհանդերձ, ակնհայտ է դառնում կայսրության՝ հայերի նկատմամբ քաղաքականության էթնիկական ընտրողականությունը, երբ դիտարկում ենք մարզի «ժամանակավորապես բնակվողների» էթնիկական պատկանելությանը: Այսպես, Համիդյան ջարդերից հետո հայերը կազմում էին «ժամանակավորապես բնակվողների» շուրջ 80

---

[1] «Первая всеобщая перепись населения Российской империи 1897 г…», т. 2, с. 34-35.

[2] **Погосян А.,** с. 126.

[3] Նույն տեղում:

[4] Նույն տեղում, էջ 127:

[5] «Кавказский календарь на 1915 г.», с. 236-237.

[6] «Հայկական սովետական հանրագիտարան», հ. 5, էջ 347:

[7] Տե՛ս «Памятная книжка и адресъ календарь Карсской области на 1914 г.», էջ I-XXXVIII:

%-ը, իսկ 1900 թ., երբ դադարել էին համիդյան ջարդերը, և ռուսական իշխանությունները զգալի ժամանակ ունեին՝ ձևակերպելու մարզում վերաբնակված հայերին, «ժամանակավորապես բնակվող» օտարահպատակ հայերի թիվը 18,51 հազար էր, ինչը կազմում էր Կարսի մարզի «ժամանակավորապես բնակվողների» 56,59 %-ը:

Մեր ուշադրությունն է գրավել նաև այն հանգամանքը, որ վիճակագրական ցուցանիշները դիտարկելիս տարեցտարի աճել է հայ բնակչության ուրբանիզացման մակարդակը: Առաջին աշխարհամարտի տարիներին հայերը մարզի բոլոր 4 քաղաքներում էլ մեծամասնություն են կազմել: Ստորև աղյուսակի տեսքով ներկայացնում ենք քաղաքներում հայ բնակչության թիվը և ընդհանուր բնակչության մեջ տոկոսային հարաբերակցությունը 1897, 1913 և 1914 թթ..

Աղյուսակ 1

Քաղաքը	***1897 թ.***[1]			***1913 թ.***[2]			***1914 թ.***[3]		
	բնակ. թիվը	***հայերի թիվը***	***հայերի %-ը***	***բնակ. թիվը***	***հայերի թիվը***	***հայերի %-ը***	***բնակ. թիվը***	***հայերի թիվը***	***հայերի %-ը***
Կարս	20 805	10332	49,6	12175	10250	84,2	30086	25252	83,9
Կաղզվան	10 518	3 913	37,2	10181	7 911	77,7	11145	8 554	76,8
Արդահան	4 142	1 315	31,7	2 176	894	41,1	4 113	2 063	50,2
Օլթի	2 373	1 056	44,4	2 058	1 623	78,9	3 258	2 188	67,2
ընդհ.	***37 838***	***16616***	***43,9***	***26590***	***20658***	***77,8***	***48602***	***38057***	***78,3***

Հայերի շրջանում ուրբանիզացման այսպիսի բարձր մակարդակը պայմանավորված էր մի շարք հանգամանքներով.

1. «Ժամանակավորապես բնակվող բնակչության» մի զգալի մասը տեղավորվում էր քաղաքներում, քանի որ նրանք,

[1] «Первая всеобщая перепись населения Российской империи 1897 г…».

[2] «Памятная книжка и адресъ календарь Карсской области на 1914 г.», Ведомость N 3-й. Այստեղ տրված է ոչ թե առկա, այլ մշտական բնակչությունը, այսինքն՝ «ժամանակավոր բնակվողները» չեն հաշվառված:

[3] «Кавказский календарь на 1915 г.».

կապված ռուսական գաղութային քաղաքականության հետ, ըստ էության, հող չէին ստանում, և ստիպված էին ապրուստի միջոցներ հայթայթել քաղաքներում.

2. Հայերն իրենց ձեռքում էին կենտրոնացրել առևտուրն ու արհեստները, որոնք բնորոշ էին քաղաքային ապրելակերպին.
3. Հայերը, ի տարբերություն անասնապահ մահմեդականների, սովոր էին քաղաքային կենցաղին (ազգաբանական ասպեկտ):

Հայերը Կարսի մարզի տարածքում շարունակեցին բնակվել մինչև 1920 թ. հոկտեմբեր ամիսը, այսինքն՝ երբ թուրք-հայկական երկրորդ պատերազմի ժամանակ թուրքերը գրավեցին Կարսի մարզի ողջ տարածքը, որի զգալի մասը մինչ օրս էլ հանդիսանում է թուրքական պետության մի մասը: Մարզի տարածքում մնացած վերջին հատուկենտ հայերը լքեցին այն 1922 թ. սկզբին, երբ մարզի տարածքն արդեն վերջնականապես ամրագրված էր քեմալական Թուրքիային՝ իր թուրքական օրենքներով և հայության ներկայությունը բացառող հասարակական-քաղաքական տրամադրվածությամբ:

բ) Ռուսներ: Ինչպես արդեն նշել ենք, Ռուսական կայսրության կենտրոնական իշխանությունների կողմից վարվող գաղութային քաղաքականության շրջանակներում կատարվում էր նոր նվաճված տարածքների «յուրացում»՝ նրանում «հավատարիմ» էթնիկական տարրի բնակեցմամբ, որը ճանապարհ էր կերտելու դեպի զգալիորեն ռուսականացված վարչամիավորի ստեղծմանը: Փաստորեն, առավել արգավանդ հողերով հարուստ երկրագործական շրջանները Կարսի մարզում անցան ռուս վերաբնակիչների մշակությանը, ռուս բնակչությունը վայելում էր զգալի արտոնություններով օժտված կարգավիճակ և այլն: Միաժամանակ հարկ է նշել այն հանգամանքը, որ ռուսական իշխանությունների քաղաքականության իրականացումը չէր ենթադրում մարզի ամբողջական «ռուսականացում», այսինքն՝ նպատակ չուներ՝ մարզում ռուսների հարաբերական գերակշռություն ստեղծելու: Ռուսական իշխանությունների նպատակն էր զուտ սոցիալական (հատ-

կապես՝ էթնիկական) հենարանի ստեղծումը, քանի որ թե՛ տեսական և թե՛ գործնական (ծախսային) առումով ռուսական իշխանությունները պատրաստ չէին իրականացնել այնպիսի մասշտաբային ծրագիր, որով հնարավոր կլիներ մարզում ռուս բնակչության հարաբերական գերակշռության ստեղծումը:

Փաստորեն, Կարսի մարզի՝ Ռուսական կայսրության սահմաններում ընդգրկվելուց հետո զգալիորեն աճեց մարզի հայ բնակչության թիվը (միայն 1878-1886 թթ.՝ ավելի քան 15 հազարով): Հայ բնակչության թվի աճին զուգահեռ Կարսի մարզում հայտնվում են եվրոպական և այլ բազմաթիվ էթնոսների ներկայացուցիչներ, որոնք նախկինում երբեք մարզի տարածքի բնակչության մասը չէին կազմել: Այսպես, Ռուսական կայսրության իշխանությունները կազմակերպում են որոշակի թվով արևելասլավոնական էթնիկական հանրությունների (ռուսների, ուկրաինացիների, բելառուսների), հույների, լեհերի, լիտվացիների, գերմանացիների, էստոնացիների, լատիշների, մոլդովացիների և այլ էթնոսների վերաբնակեցումը Կարսի մարզում: Նրանք պետք է դառնային ռուսական կենտրոնական իշխանությունների էթնիկական հենարանը նոր նվաճված գաղութում:

Մարզի ռուս բնակչության մասին խոսելիս հարկ ենք համարում նշել, որ բոլոր ուսումնասիրություններում որպես ռուս են հաշվված արևելասլավոնական բոլոր 3 էթնոսները: Նույնը նկատելի է նաև ռուսական վիճակագրական սկզբնաղբյուրներում՝ բացառությամբ 1897 թ. մարդահամարի: Նման պայմաններում մեզ համար մեծ բարդություն է հանդիսանում արևելասլավոնական 3 էթնոսների քանակի ճշգրտումը՝ առանձին-առանձին, ուստի ելակետ ենք ընդունել 1897 թ. դրությամբ տոկոսային հարաբերակցությունը: Միևնույն ժամանակ արևելասլավոնական մյուս 2 էթնոսներին՝ մալոռուսներին (ուկրաինացիներին) և բելառուսներին ևս անուշադրության չենք մատնել:

1880 թ. սկսվում է մարզը ռուսներով, հույներով, ուկրաինացիներով, բելառուսներով և այլ «հուսալի» էթնոսներով բնակեցնելու գործընթացը: Ի տարբերություն վերաբնակվող հայ ընտանիքների՝ մարզում հաստատվող ռուսները, ուկրաինացիները, բելառուսները և

հույներն անմիջապես ստանում էին պետական-իրավական կարգավիճակ՝ հաշվառվելով՝ որպես մարզի մշտական բնակիչներ:

Վերաբնակեցման էին ենթարկվում Ռուսական կայսրության Սարատովի և Տամբովի նահանգներից 1830-1840-ական թթ. Այսրկովկաս վերաբնակեցված մոլոկանների, ինչպես նաև Եկատերինոսլավի և Տամբովի նահանգներից տեղահանված դուխոբորների զգալի մասը[1]: Մի փոքր ավելի ուշ Ռուսական կայսրության կենտրոնական շրջաններից Կարսի մարզ տեղափոխվեցին որոշակի թվով ռուս և ուկրաինացի ուղղափառներ, ինչպես նաև՝ պրիգուններ:

Արդեն 1882 թ. մարզում արևելյան սլավոնների թիվը հասնում է 7,96 հազարի (93,6 %-ը՝ աղանդավորներ): Մարզում արդեն կային արևելասլավոնական 18 գյուղեր (մոլոկաններ՝ 11 գյուղ, դուխոբորներ՝ 6, ուղղափառներ՝ 1)[2]: Ռուսներն սկսում են որոշակի թիվ կազմել նաև քաղաքներում: Այսպիսով, արևելյան սլավոնները կազմում են մարզի բնակչության 4,97 %-ը:

1880-ական թթ. ողջ ընթացքում շարունակվում է արևելասլավոնական էթնիկական հանրությունների, մասնավորապես՝ ռուսների վերաբնակեցումը Կարսի մարզի տարածքում: Եվ ահա, 1886 թ. նրանց քանակը հասնում է 10,7 հազարի[3] (այսինքն՝ բնակչության 6,15 %-ը), իսկ 1880-ական թթ. վերջին՝ 11,4 հազարի (բնակչության շուրջ 6 %-ը, այդ թվում՝ աղանդավորներ՝ 88,9 %)[4]:

1880-ական թթ. վերջին մարզում կային ռուս ուղղափառներով բնակեցված արդեն 4 գյուղեր (Միխայլովկա, Օլգովկա, Խորոշեյե և Գրենադերսկոյե), սակայն նրանց հիմնական զանգվածը բնակվում էր Կարսի շրջանի Գրենադերսկոյե (հայկ.՝ *Զարիշատ)* գյուղում, որտեղ բնակվում էին Թիֆլիսի նահանգից վերաբնակեցված ռուս ուղղափառները: Այս գյուղերում բնակեցվում էին հիմնականում կազակներ, և, ըստ էության, գյուղերը վերածվում էին ռազմական բնակավայ-

---

[1] **Погосян А.,** с. 127.

[2] **Հակոբյան Ա.,** Կարսի մարզ, էջ 29:

[3] «Свод статистических данных…», VII, с. 8.

[4] **Хелмицкий П.,** с. 11-14.

ների[1]:

Կարսի ոստիկանական տեղամասում արդեն որոշակի թիվ էին կազմում նաև պրիգուններն (714) ու սուբոտնիկները (58), սակայն, ինչպես նշում է Պ. Խելմիցկին, պրիգունների մեծ մասը ոչ թե ռուսներ էին, այլ՝ մորդվաներ[2]:

1892 թ. արևելյան սլավոնների թիվը հասնում է 14,1 հազարի, ինչը կազմում էր մարզի բնակչության արդեն շուրջ 7 %-ը[3]: Մարզում ռուսական իշխանությունների կողմից իրականացվող գաղութային քաղաքականության ապացույցն այն էր, որ ռուսական իշխանությունների համար հուսալի տարր համարվող սեփական ժողովրդի՝ ռուսների (ուկրաինացիների և բելառուսների հետ միասին) 71,48 %-ը և իրենց կողմից վերաբնակեցված մյուս եվրոպական էթնոսների (լեհեր՝ 98,92 %, լիտվացիներ՝ 99,1 %, գերմանացիներ՝ 86,05 %, էստոնացիներ՝ 72,09 %)[4] ներկայացուցիչների մեծ մասը Կարսի մարզում տղամարդիկ էին, որոնք ցանկացած պահին կարող էին զինվոր դառնալ:

1897 թ. համառուսաստանյան առաջին մարդահամարի տվյալներով Կարսի մարզի ռուսների (ռուսալեզուների) թիվը հասնում է 22,33 հազարի (բնակչության 7,68 %-ը), որից քաղաքաբնակ էին միայն 28,63 %-ը: Ուղղափառները կազմում էին մարզի ռուս բնակչության արդեն 45,07 %-ը, աղանդավորները՝ 53,98 %-ը, կաթոլիկները՝ 0,38 %-ը, առաքելականները՝ 0,14 %-ը:

Ռուսների 75,58 %-ը կենտրոնացած էր Կարսի, 11,72 %-ը՝ Կաղզվանի, 8,8 %-ը՝ Արդահանի, 3,9 %-ը՝ Օլթիի շրջաններում[5]:

Նույն 1897 թ. մարզում բնակվում էին 5,28 հազար ***ուկրաինացիներ*** և 0,25 հազար ***բելառուսներ:*** Ուկրաինացիների 99,92 %-ը և բելառուսների 72 %-ը ուղղափառներ էին (բելառուսների 26 %-ը ունիատ կաթոլիկներ էին, 1,6 %-ը՝ աղանդավոր, 0,4 %-ը՝ առաքելական):

Ուկրաինացիների 62,46 %-ը կենտրոնացած էին Կարսի, 27,11

---

[1] **Малхасян М.,** с. 2.

[2] **Хелмицкий П.,** с. 16-18.

[3] Տե՛ս «Энциклопедический словарь Ф. А. Брокгауза и И. А. Ефрона», h. 14 A (28):

[4] «Первая всеобщая перепись населения Российской империи 1897 г…», т. 2, с. 35.

[5] Նույն տեղում, էջ 34-37:

%-ը՝ Կաղզվանի, 7,26 %-ը՝ Արդահանի, 3,18 %-ը՝ Օլթիի շրջաններում[1]: Ի տարբերություն ռուսների՝ Կարսի մարզի ուկրաինացի բնակչության մեծ մասը՝ 67,7 %-ը, քաղաքաբնակ էր:

Բելառուսների 82 %-ը կենտրոնացած էին Կարսի, 14,8 %-ը՝ Կաղզվանի և 3,2 %-ը՝ Արդահանի շրջաններում[2]: Օլթիի շրջանում բելառուսներ չէին բնակվում: Ի տարբերություն հիմնականում գյուղաբնակ ռուսների և քաղաքաբնակ ուկրաինացիների՝ մարզի բելառուս բնակչությունը գրեթե հավասարապես էր բաշխված քաղաքներում (49,6 %) և գյուղերում (50,4 %):

Այսպիսով, 1897 թ. արևելասլավոնական էթնիկական հանրությունների ընդհանուր թվաքանակը Կարսի մարզում 27,86 հազար էր, որից ռուսներ՝ 80,15 %-ը, ուկրաինացիներ՝ 18,95 %-ը, բելառուսներ՝ 0,9 %-ը[3]:

Ամբողջացնելով վերը կատարված հաշվարկները՝ ստորև «Աղյուսակ 2»-ում ներկայացնում ենք 1897 թ. դրությամբ Կարսի մարզի արևելասլավոնական բնակչության բաշխվածության ամբողջական պատկերը (ըստ շրջանների գյուղական և քաղաքային բնակչության) տոկոսային հարաբերակցությամբ (%).

Աղյուսակ 2

Էթնոսը	***Կարսի շրջան***		***Կաղզվանի շրջան***		***Արդահանի շրջան***		***Օլթիի շրջան***	
	ք. Կարս	*գյուղ. բնակչ.*	*ք. Կաղզվան*	*գյուղ. բնակչ.*	*ք. Արդահան*	*գյուղ. բնակչ.*	*ք. Օլթի*	*գյուղ. բնակչ.*
ռուսներ	15,6	59,98	6,01	5,71	4,24	4,56	2,78	1,12
ուկրաինացիներ	36,26	26,2	22,64	4,47	7,12	0,13	1,69	1,5
բելառուսներ	32,4	49,6	14	0,8	3,2	-	-	-
ընդհանուր	***19,67***	***53,48***	***9,23***	***5,43***	***4,78***	***3,68***	***2,55***	***1,18***

Այնուհանդերձ, այս պատկառելի թիվը երկար չպահպանվեց. 1890-ական թթ. վերջերից դուխոբորներն սկսեցին արտագաղթել

[1] «Первая всеобщая перепись населения Российской империи 1897 г…», т. 2, с. 35.
[2] Նույն տեղում:
[3] Նույն տեղում, էջ 34-37:

Ամերիկա[1]: Փաստորեն, ռուս բնակչությունը, որ արհեստականորեն էր Կարսի մարզ բերվել, խոր արմատներ չգցեց տեղում՝ աստիճանաբար բռնելով արտագաղթի ուղին:

Չնայած այս ամենին՝ արևելյան սլավոնները շարունակեցին զգալի թիվ կազմել Կարսի մարզում նաև 20-րդ դ. սկզբին: Եվ այսպես, 1910 թ. մարզում նրանց քանակը 18 հազար էր[2], 1912 թ.՝ 18,32 հազար[3], 1914 թ.՝ 19,77 հազար[4]:

Ամբողջացնելով Կարսի մարզի արևելասլավոնական բնակչության քանակական փոփոխությունը 1882-1914 թթ.՝ ստորև ներկայացնում ենք այն աղյուսակի տեսքով.

Աղյուսակ 3

Կարսի մարզի արևելասլավոնական բնակչության թիվը (հազ. մարդ) 1882–1914 թթ.						
1882 թ.	*1886 թ.*	*1892 թ.*	*1897 թ.*	*1910 թ.*	*1912 թ.*	*1914 թ.*
7,96	10,7	14,1	27,86	18	18,32	19,77

Ի վերջո, Ռուսական կայսրության փլուզումից (1917 թ.) և թուրքական երկու արշավանքներից (1918 թ., 1920 թ.) հետո արևելասլավոնական բնակչությունը լքեց մարզի տարածքը՝ հաստատվելով Ռուսաստանի տարբեր հատվածներում և Այսրկովկասում (հիմնականում՝ Արևելյան Հայաստանում և Վրաստանում):

Կարսի մարզի տեղաբնիկ և ամենաբազմամարդ էթնիկ հանրության՝ հայերի, և մարզի՝ որպես ռուսական վարչամիավորի էթնիկ ռուս բնակչության մասին խոսելուց հետո այժմ անդրադառնում ենք մարզի յուրաքանչյուր էթնիկ հանրության՝ ըստ նրանց թվաքանակի նվազման կարգի:

գ) Թուրքեր: Իրենց թվով մարզի երկրորդ էթնոսը թուրքերն էին: Ինչպե՞ս էր ստացվել, որ թուրքերը դարձել էին մարզի բնակչու-

---

[1] **Погосян А.,** с. 130.

[2] Նույն տեղում, էջ 128:

[3] «Кавказский календарь на 1913 г.», с. 132.

[4] **Հակոբյան Ա.,** Կարսի մարզի ազգաբնակչությունը, էջ 150:

թյան գերիշխող էթնիկ տարրերից մեկը: Չէ՞ որ մարզի տարածքը մշտապես բնակեցված է եղել տեղաբնիկ էթնիկ տարրով՝ հայերով:

Ինչպես արդեն նշել ենք, օսմանյան տիրապետության ավելի քան 350-ամյա ժամանակաշրջանում հայ բնակչությունը զանգվածաբար լքել է Կարսի մարզի տարածքը, իսկ թուրքերի զգալի մասն էլ (հատկապես՝ Օլթիի և Արդահանի շրջաններում) մահմեդականացված հայեր և, մասամբ՝ վրացիներ էին, ինչի մասին վկայում են թե՛ 1830-1860-ական թթ. մարզի տարածք այցելած ֆրանսիացի և անգլիացի ճանապարհորդները[1], թե՛ 19-րդ դարի վերջի ռուս հեղինակները, այդ թվում՝ ռազմական վիճակագիր Պ. Խելմիցկին[2]: Բացի այդ՝ զգալի թվով թուրքեր այստեղ էին հաստատվել հարևան վարչամիավորներից, մասնավորապես՝ Էրզրումի և այլ նահանգներից:

Հարկ է նշել այն հանգամանքը, որ մինչև Ռուսական կայսրության իշխանությունների կողմից անցկացվող հաշվառումները և նրանց կողմից ներկայացվող վիճակագրական տվյալները օսմանյան իշխանությունները տեղի մահմեդականներին ներկայացնում էին «մահմեդականներ» կամ «թուրքեր» ընդհանրական ձևով, ուստի «թուրք» էթնոանվանմանը պետք է վերապահումով մոտենալ: Փաստորեն, տեղի թյուրքալեզու էթնիկական հանրությունները ներկայացվում էին ընդհանրական «թուրք» անվանումով, ուստի պատահական չէ, որ ռուսական վիճակագրական առաջին տվյալներում նախկինում «թուրք» ներկայացվող բոլոր էթնիկ հանրությունները ընդհանուր «մահմեդականներ» անվամբ էին հաշվառվում:

1886 թ. ռուսներն արդեն տարանջատում են կատարում բոլոր մահմեդական էթնիկական խմբերի միջև՝ հստակ առանձնացնելով ազգային ինքնագիտակցություն ունեցող թուրքերին, կարափափախներին և մյուս մահմեդական էթնոսներին: Փաստորեն, հաշվառման և վիճակագրության կազմման համար հիմք է ծառայում ազգային ինքնագիտակցությունը, ինչը նախկինում գործնականում չէր կիրառվել:

---

[1] Տե՛ս **Մուրադյան Հ.,** Կարսի նահանգի վարչաժողովրդագրական նկարագիրը 19-րդ դարի առաջին երեսնամյակին, էջ 106-186:

[2] **Хелмицкий П.,** с. 10.

Բնակչության տարանջատումը միայն մահմեդականների, քրիստոնյաների և այլադավան էթնոսների միջև դադարում է լինել բնակչության հաշվառման հիմնական որոշիչը:

Կարսի մարզի կազմավորմանը հաջորդած առաջին տարիներին (1877 թ. – 1880-ական թթ. առաջին կես) Կարսի մարզի թուրք բնակչության շրջանում մտավախություն կար, որ ռուսական իշխանությունները կարող են բռնաճնշումներ իրականացնել իրենց նկատմամբ՝ ելնելով կրոնական տարբերությունից և ռուս-թուրքական միջպետական հարաբերությունների լարվածությունից: Բացի այդ՝ թուրքերը և մահմեդական էթնիկական մյուս խմբերի մեծ մասը չէին ցանկանում հրաժարվել իրենց արտոնյալ կարգավիճակից և ենթարկվել ռուսական վարչակարգին ու օրենքներին: Այս մտավախությունները պատճառ են դառնում՝ տասնյակ հազարավոր թուրքերի՝ Կարսի մարզից արտագաղթելու համար: Այսպես, 1877 թ. կեսերից սկսվեց մահմեդական բնակչության զանգվածային արտագաղթը Կարսի մարզից:

Արտագաղթած թյուրքական բնակչության թիվը հնարավոր չէ հստակորեն որոշել, քանի որ արտագաղթողները ռուսական հրամանագրերում և զեկուցագրերում նշվում են՝ որպես «մահմեդականներ», որոնց թվում էին նաև մահմեդական այլ էթնոսները, հատկապես՝ կարափափախները: Վերջիններիս օսմանյան իշխանությունները փորձ կատարեցին՝ զորակոչելու բանակ, սակայն նրանք չհնազանդվեցին, և նրանց զգալի մասն ընտանիքներով տեղափոխվեց Պարսկաստան[1]:

Փաստորեն, վերոնշյալ օրինակով հստակորեն պարզ է դառնում, որ մարզը լքած մահմեդական բնակչության թվում մեծ մասնաբաժին ունեին կարափափախները: Սկզբնաղբյուրների հաղորդած տեղեկությունների համադրմամբ նրանց թիվը պետք է գերազանցեր 15 հազարը: Բացի այդ՝ մշտական տեղաշարժեր էին կատարում նաև թուրքմենները, քրդերը, թաթարները, պարսիկները և այլ էթնոսներ:

Ինչպես արդեն նշել ենք, 1878-1881 թթ. Կարսի մարզից հեռանում են 82,76 հազար մահմեդականներ[2]: Անհնար է հստակորեն որո-

---

[1] **Погосян А.,** с. 125.

[2] Նույն տեղում, էջ 120-123:

շել, թե դրանցից որքանն էին հենց թուրքեր: Սկզբնաղբյուրների տեղեկությունների համադրմամբ և ժողովրդագրա-վիճակագրական հաշվարկներով նրանց թիվը կարող էր հասնել շուրջ 40 հազարի:

Չնայած 1879-1881 թթ. արտագաղթին՝ թուրքերը շարունակեցին զգալի թիվ կազմել Կարսի մարզում: 1886 թ. մարզում բնակվում էին 41,82 հազար թուրքեր, այսինքն՝ մարզի բնակչության 24,03 %-ը, ինչը մի փոքր ավելին էր, քան հայերի թիվը (37,1 հազար)[1]: Փաստորեն, 1886 թ. թուրքերը քանակապես զբաղեցնում էին առաջին տեղը Կարսի մարզի էթնիկական հանրությունների շարքում:

1880-ական թթ. վերջին թուրքերի թվաքանակը հասնում է 45,75 հազարի (բնակչության 24,1 %-ը)[2], 1892 թ.՝ 48,2 հազարի (շուրջ 24 %-ը)[3], 1897 թ.՝ 63,55 հազարի (21,86 %-ը)[4]: Փաստորեն, 1892 թ. թուրքերը շարունակում էին քանակապես գերազանցել հայերին (43,2 հազար[5]), և միայն 1897 թ. հայերը (73,41 հազար[6]) քանակապես արդեն զգալիորեն գերազանցում էին թուրք բնակչությանը:

1897 թ. Ռուսական կայսրության առաջին համընդհանուր մարդահամարի տվյալներով թուրքերի 44,14 %-ը կենտրոնացած էր Արդահանի, 31,03 %-ը՝ Օլթիի, 16,7 %-ը՝ Կարսի, և միայն 8,13 %-ը՝ Կաղզվանի շրջաններում[7]:

Կարսի մարզի թուրքերի միայն 6,18 %-ն էր բնակվում քաղաքներում՝ Կարսում, Արդահանում, Օլթիում և Կաղզվանում[8]:

Թուրքերի 99,98 %-ը[9] սուննի ուղղության[10] մահմեդականներ էին:

---

[1] «Свод статистических данных….», VII, с. 8.

[2] **Хелмицкий П.,** с. 24.

[3] «Энциклопедический словарь Ф. А. Брокгауза и И. А. Ефрона», т. 14 А (28).

[4] «Первая всеобщая перепись населения Российской империи 1897 г…», с. 34-35.

[5] «Энциклопедический словарь Ф. А. Брокгауза и И. А. Ефрона», т. 14 А.

[6] «Первая всеобщая перепись населения Российской империи 1897 г…», с. 35.

[7] Նույն տեղում, էջ 34-35:

[8] Նույն տեղում:

[9] Նույն տեղում, էջ 34-39:

[10] **Хелмицкий П.,** с. 26.

Թուրք բնակչությանը մշտապես բնորոշ է եղել տղամարդկանց քանակական գերակշռությունը կանանց նկատմամբ: Այսպես, 1897 թ. տղամարդիկ կազմում էին թուրքերի 51,93 %-ը, ինչը մի փոքր ցածր էր մարզի մահմեդական մյուս էթնոսների մեծ մասի համապատասխան ցուցանիշից (քրդեր՝ 52,67 %, կարափափախներ՝ 52,13 %, թուրքմեններ՝ 51,56 % թաթարներ՝ 59,14 % և այլն)[1]: Ընդհանուր առմամբ՝ տղամարդիկ կազմում էին մարզի մահմեդական բնակչության 52,47 %-ը[2]:

1897-1913 թթ. թուրքերի քանակը շարունակում է աճել՝ 1906 թ. հասնելով 65,16 հազարի[3], 1910 թ.՝ 67,14 հազարի[4], իսկ 1913 թ.՝ 68,16 հազարի[5]:

Թուրքերի՝ ընդհանուր բնակչության մեջ հարաբերական մասնաբաժնի կայուն (20-24 %) առկայությունը 1886-1914 թթ. պայմանավորված էր նրանով, որ նրանց քանակի փոփոխության վրա միգրացիոն գործընթացների ազդեցությունը շատ փոքր էր, քանի որ ցարական իշխանությունների կողմից բռնաճնշումներ չէին իրականացվում նրանց նկատմամբ, և արտագաղթի համար, ըստ էության, թե՛ տնտեսական, թե՛ քաղաքական և թե՛ մշակութային-կրոնական նախադրյալները բացակայում էին: Թուրքերի թվաքանակի փոփոխությունը պայմանավորված էր գրեթե միմիայն բնական աճով, որը նկատելիորեն մեծացավ ռուսական տիրապետության ընթացքում:

Փաստորեն, Կարսի մարզում թուրքերը մշտապես կազմել են բնակչության շուրջ մեկ հինգերորդ մասը՝ քանակապես զիջելով միայն հայերին: Ընդ որում՝ Առաջին աշխարհամարտի սկզբում մարզում հայերի թիվը շարունակում է շեշտակիորեն աճել, ինչը բերում է նրան, որ 1915 թ. հայերը (ավելի քան 123 հազար մարդ) քանակապես գրեթե երկու անգամ գերազանցում էին թուրքերին (մոտ 70 հազար մարդ):

---

[1] «Первая всеобщая перепись населения Российской империи 1897 г….», с. 35.

[2] Նույն տեղում, էջ 39:

[3] **Погосян А.,** с. 126.

[4] Նույն տեղում:

[5] «Памятная книжка и адресъ календарь Карсской области на 1914 годъ», Ведомость N 1-й. «Հայկական սովետական հանրագիտարան», հ. 5, էջ 346:

Ցավոք, այս հարաբերակցությունը երկար չի պահպանվում. նախ 1918 թ. թուրքական արշավանքի հետևանքով Կարսի մարզի հայ բնակչությունն զգալի կորուստներ կրեց: Հայերը Կարսի մարզի տարածքում շարունակեցին բնակվել մինչև 1920 թ. հոկտեմբեր ամիսը, այսինքն՝ երբ թուրք-հայկական երկրորդ պատերազմի ժամանակ թուրքերը վերջնականապես գրավեցին Կարսի մարզի ողջ տարածքը, իսկ թուրք բնակչությունը ներկայումս կազմում է Կարսի մարզի նախկին տարածքի բնակչության հիմնական էթնիկական տարրերից մեկը:

դ) Քրդեր[1]***:*** Կարսի մարզի երրորդ ամենամարդաշատ էթնիկական հանրությունը քրդերն էին: Նրանք այստեղ հաստատվել են օսմանյան տիրապետության ժամանակաշրջանում՝ 16-19-րդ դդ.: 1886 թ. նրանց թիվը հասնում է 26,44 հազարի (բնակչության 15,19 %-ը)[2], իսկ 1880-ական թթ. վերջին՝ ավելի քան 32 հազարի (17,1 %):

Քրդերի թիվն առանց եզդիների 1897 թ. հասնում է 39,66 հազարի[3]: Նրանց 36,72 %-ը կենտրոնացած էր Կաղզվանի, 31,67 %-ը՝ Արդահանի, 22,73 %-ը՝ Կարսի շրջաններում: Նրանք սուննի մահմեդականներ էին:

Քրդերի քանակն ավելանում է նաև 20-րդ դ. սկզբին, ինչը պայմանավորված էր բնական աճի բարձր տեմպերով (մոտ 3 %): Այսպես, 1910 թ. նրանց քանակը (եզդիների հետ միասին) հասնում է 52,4 հազարի[4], 1914 թ.՝ 60,4 հազարի[5]:

ե) Հույներ: Հույներն իրենց քանակով չորրորդն էին մարզում: Նրանք հաստատվել էին մարզի տարածքում վերջինիս՝ Ռուսական կայսրությանը միանալուց հետո, քանի որ, ինչպես արդեն նշել ենք, դա բխում էր ցարիզմի գաղութային քաղաքականության շահերից:

1880-ական թթ. սկզբներին բազմահազար հույների թույ-

---

[1] Հարկ ենք համարում նշել, որ ռուսական վիճակագրական սկզբնաղբյուրների մեծ մասում քրդերի թվում հաշվառվել են նաև եզդիները, ուստի մենք փորձել ենք տարանջատել այլադավան այս 2 էթնոսներին:

[2] «Свод статистических данных…», VII, с. 8.

[3] «Первая всеобщая перепись населения Российской империи 1897 г…», с. 34-39.

[4] **Погосян А.,** с. 126.

[5] **Հակոբյան Ա.,** Կարսի մարզի ազգաբնակչությունը, էջ 150:

լատրվեց Օսմանյան կայսրության Տրապիզոնի վիլայեթից հաստատվել Կարսի մարզի տարածքում[1]: 1886 թ. նրանց թիվը հասավ արդեն 23,53 հազարի[2], ինչը կազմում էր մարզի ընդհանուր բնակչության 13,52 %-ը: 1880-ական թթ. վերջին նրանց թիվը մոտ 26 հազար (բնակչության 13,1 %-ը)[3] էր, իսկ 1892 թ.՝ 27,12 հազար (բնակչության 13,5 %-ը)[4]: Փաստորեն, կարճ ժամանակամիջոցում հույներն սկսում են զգալի թիվ կազմել Կարսի մարզում՝ հանդիսանալով վերջինիս բնակչության հիմնական էթնիկական տարրերից մեկը:

1897 թ. Ռուսական կայսրության բնակչության առաջին համընդհանուր մարդահամարի տվյալներով հույների քանակը Կարսի մարզում հասնում էր 32,59 հազարի, որից 45,42 %-ը տեղաբաշխված էր Կարսի, 24,05 %-ը՝ Արդահանի, 22,23 %-ը՝ Կաղզվանի շրջաններում[5]: Նրանց ընդամենը 3,19 %-ն էր բնակվում քաղաքներում: Հույների 99,86 %-ը ուղղափառ քրիստոնյաներ էին[6]:

1897 թ. հույներն իրենց քանակով չորրորդն էին Կարսի մարզի էթնիկական հանրությունների շարքում՝ զիջելով միայն հայերին (73,41 հազար), թուրքերին (63,55 հազար) և քրդերին (39,66 հազար):

Ամբողջացնելով վերը կատարված հաշվարկները՝ ստորև աղյուսակի տեսքով ներկայացնում ենք 1897 թ. դրությամբ Կարսի մարզի հույն բնակչության բաշխվածության ամբողջական պատկերը (ըստ շրջանների գյուղական և քաղաքային բնակչության) տոկոսային հարաբերակցությամբ (%).

Աղյուսակ 4

Կարսի շրջան		***Արդահանի շրջան***		***Կաղզվանի շրջան***		***Օլթիի շրջան***	
ք. Կարս	*գյուղ. բնակչ.*	*ք. Արդահան*	*գյուղ. բն.*	*ք. Կաղզվան*	*գյուղ. բն.*	*ք. Օլթի*	*գյուղ. բն.*
2,25	43,18	0,33	23,73	0,3	22	0,31	7,99

[1] **Хелмицкий П.,** с. 22-24.
[2] «Свод статистических данных…», VII, с. 8.
[3] **Хелмицкий П.,** с. 24.
[4] «Энциклопедический словарь Ф. А. Брокгауза и И. А. Ефрона», т. 14 А (28).
[5] «Первая всеобщая перепись населения Российской империи 1897 г…», т. 2, с. 34-35.
[6] Նույն տեղում, էջ 36:

Ճիշտ է, հույներն արտոնյալ կարգավիճակ ունեին Կարսի մարզում և վայելում էին ցարական իշխանությունների հովանավորությունը, սակայն, այնուհանդերձ, գտնվում էին սոցիալ-տնտեսական ոչ այնքան բարեկեցիկ պայմաններում, ուստի պատահական չէր արտագաղթի միտումների առաջացումը: Այսպես, 19-րդ դ. վերջից սկսած որոշ թվով հույներ արտագաղթում են դեպի Հունաստան, մասնավորապես՝ Թեսալիա[1]:

Այնուհանդերձ, շարունակվում է հույների ներգաղթը Կարսի մարզ: Մարզի տարածքում էին հաստատվում ոչ միայն Տրապիզոնի վիլայեթի, այլ նաև Ռուսական կայսրության Թիֆլիսի նահանգի Ծալկայի շրջանի հույները[2]: Եվ ահա, այս գործընթացների և բնական աճի շնորհիվ հույների թվաքանակը 1906 թ. հասնում է 40 հազարի[3], իսկ 1914 թ.՝ 58,94 հազարի[4]: 1914 թ. հույները կազմում էին Կարսի մարզի բնակչության 15,07 %-ը:

Հույները, ինչպես հայերը և արևելյան սլավոնները, Ռուսական կայսրության փլուզումից (1917 թ.) և թուրքական երկու արշավանքներից (1918 և 1920 թթ.) հետո լքեցին մարզի տարածքը՝ հաստատվելով Հունաստանում, Ռուսաստանի տարբեր հատվածներում և Այսրկովկասում (հիմնականում՝ Արևելյան Հայաստանում և Վրաստանում):

Ամբողջացնելով Կարսի մարզի հույն բնակչության քանակական փոփոխությունը 1886-1914 թթ.՝ ստորև ներկայացնում ենք այն աղյուսակի տեսքով.

Աղյուսակ 5

Կարսի մարզի հույն բնակչությունը (հազ. մարդ) 1886–1914 թթ.					
1886 թ.	*1889 թ.*	*1892 թ.*	*1897 թ.*	*1906 թ.*	*1914 թ.*
23,53	մոտ 26	27,12	32,59	40	58,94

[1] **Погосян А.,** с. 130.

[2] **Հակոբյան Ա.,** Կարսի մարզ, էջ 28-29:

[3] **Погосян А.,** с. 126-127.

[4] **Հակոբյան Ա.,** Կարսի մարզի ազգաբնակչությունը, էջ 150: Տոկոսներով հաշվարկն ինքներս ենք կատարել:

Այսպիսով, 1880-1917 թթ. Կարսի մարզում բնակվել են տասնյակ հազարավոր հույներ, որոնք մշակութային զգալի շփումներ են հաստատել տեղի էթնիկական հանրությունների, այդ թվում և հայերի հետ: Կարսի մարզի հունական համայնքի պատմությունն անբաժան մասն է կազմում ինչպես հույների, այնպես էլ հայոց և անգամ Ռուսաստանի պատմության:

զ) Կարապափախներ[1]***:*** Կարսի մարզում իրենց քանակով հինգերորդը կարապափախներն էին: Ինչպես արդեն նշել ենք, նրանք Կարսի մարզի տարածք են տեղափոխվել 1830-ական թթ. Ռուսական կայսրության տարածքից, հիմնականում՝ Բորչալուի ու Ղազախի շրջաններից և, մասամբ՝ Պարսկաստանից: Թյուրքալեզու այս էթնիկական խումբը վրացիներից ընդօրինակել էր ոչխարի սև բրդից գլխարկներ (թուրք.՝ *փափախներ)* կրելը, ուստիև ստացել էր «կարապափախ» էթնոնիմը:

1880-ական թթ. վերջին նրանց թվաքանակը մարզում հասնում է ավելի քան 20 հազարի (մարզի բնակչության 10,7 %-ը)[2], 1897 թ.՝ 29,88 հազարի (բնակչության 10,28 %-ը)[3], 1913 թ.՝ 43,27 հազարի[4]: Նրանց քանակական աճը տեղի էր ունենում գրեթե բացառապես բնական աճի հետևանքով: 1897 թ. կարապափախների 73,64 %-ը և 26,35 %-ը բնակվում էին համապատասխանաբար Կարսի և Արդահանի շրջաններում[5]:

Հարկ է նշել, որ կարապափախների 99,97 %-ը մահմեդականներ էին[6]: Նրանց 60 %-ը շիա (հիմնականում՝ Շորագյալում), իսկ 40 %-ը՝ սուննի (հիմնականում՝ Աղբաբայում) մահմեդականներ էին[7]:

---

[1] Ռուսական վիճակագրական աղբյուրների մի մասում կարապափախների մեջ են ներառված բոլոր թաթարները, ուստի ներկայացնում ենք կարապափախների՝ մեր կողմից առանձնացված թիվը միայն:

[2] **Хелмицкий П.,** с. 34.

[3] «Первая всеобщая перепись населения Российской империи 1897 г…», т. 2, с. 34-35.

[4] «Հայկական սովետական հանրագիտարան», հ. 5, էջ 346:

[5] Տե՛ս «Первая всеобщая перепись населения Российской империи 1897 г…», հ. 2, էջ 34-39:

[6] Նույն տեղում, էջ 38-39:

[7] Տե՛ս **Хелмицкий П.,** էջ 34-35:

Կարսի մարզի կազմալուծումից հետո Աղբաբայի ոստիկանական տեղամասն անցավ ՀՍԽՀ-ին: Այնտեղ բնակվող կարափափախները ԽՍՀՄ 1939 թ. մարդահամարի ժամանակ միայն ստացան «ադրբեջանցի» էթնոանվանումը՝ նույնացվելով Արևելյան Այսրկովկասում գոյացած Ադրբեջան պետության կովկասյան թաթար բնակչության հետ՝ անտեսելով անգամ տարածքային-ազգագրական խզումը էթնիկական երկու հանրությունների միջև:

Է) Թուրքմեններ: Մահմեդական ալևի (Ալի-Ալլահի) աղանդի հետևորդներն էին, ինչը պատճառ էր հանդիսանում՝ թուրքմենական համայնքի՝ թուրքերից և մյուս մահմեդական էթնիկական խմբերից մեկուսի բնակության համար:

Թուրքմենների մեծ մասը մարզի տարածքում հաստատվել է 1878 թ. հետո, այսինքն՝ Կարսի մարզի՝ Ռուսական կայսրությանը միացվելուց հետո[1]: Ինչպես նշում է Պ. Խելմիցկին, նրանք ոչ մի ընդհանրություն չունեին Միջին Ասիայում բնակվող թուրքմենների հետ, ուստի նրանց անվանման ծագումը դժվար է պարզել[2]:

1880-1890-ական թթ. ընթացքում թուրքմենների քանակը Կարսի մարզում գրեթե չի փոփոխվել: Նրանց թիվը 1886-1892 թթ. տատանվել է 8-10 հազարի սահմաններում՝ կազմելով մարզի բնակչության շուրջ 5 %-ը[3]:

1897 թ. նրանց քանակը 8,44 հազար էր կազմում[4]: Նրանց 51,27 %-ը կենտրոնացած էր Արդահանի, իսկ 29,09 %-ը՝ Կարսի շրջանում[5]:

Բնական աճի բարձր տեմպերի հետևանքով 1913 թ. թուրքմենների քանակը հասնում է 16,56 հազարի[6]:

---

[1] **Погосян А.,** с. 127.

[2] Տե՛ս **Хелмицкий П.,** էջ 27:

[3] Տե՛ս նույն տեղում, էջ 26: «Свод статистических данных…», VII, с. 8. «Энциклопедический словарь Ф. А. Брокгауза и И. А. Ефрона», т. 14 А (28).

[4] «Первая всеобщая перепись населения Российской империи 1897 г…», т. 2, с. 34-35.

[5] Տե՛ս նույն տեղում:

[6] «Հայկական սովետական հանրագիտարան», հ. 5, էջ 346:

1920 թ. հոկտեմբերին Կարսի մարզի՝ թուրքերի կողմից ռազմակալումից հետո թուրքմենները խառնվում են մարզի թուրք-քրդական մահմեդական բնակչության հետ՝ պահպանելով կրոնական առանձնահատկությունները, ինչը հնարավորություն է տալիս նրանց թեկուզև երկակի էթնիկական ինքնագիտակցության շրջանակներում ազգային ինքնությունը որոշակիորեն պահպանել:

ը) Եզդիներ: 1880-ական թթ. Օսմանյան կայսրությունից եզդիների հոծ խմբեր հաստատվում են Կարսի մարզում[1]: Նրանց թիվը 1880-ական թթ. վերջին հասնում է ավելի քան 2 հազարի, և նրանք կենտրոնացած էին հիմնականում Կաղզվանի շրջանի Նախիջևանի ոստիկանական տեղամասի Եզդիական գյուղական շրջանում[2]: 1892 թ. նրանց քանակը հասնում է 2,51 հազարի[3]: 1897 թ. մարդահամարի ժամանակ եզդիներն արդեն նշվում են որպես քրդերեն խոսողներ: Եթե դիտարկում ենք քրդախոսների ցանկը՝ ըստ մարդահամարի, ապա նկատում ենք, որ նրանց թվում նշվում են 3,31 հազար ոչ մահմեդականներ և ոչ քրիստոնյաներ[4]: Այստեղից էլ կարող ենք ենթադրել, որ 1897 թ. մարզի եզդիների քանակը հասել է 3,31 հազարի, որոնց 95,89 %-ը կենտրոնացած էր Կաղզվանի շրջանում[5], որտեղ էլ հենց գտնվում էր Եզդիական գյուղական շրջանը: Առաջին աշխարհամարտի նախօրյակին նրանց թիվը հատել էր 4,5 հազարի[6] սահմանը:

Եզդիներն ստիպված էին Կարսի մարզի թուրքական զավթումից հետո տեղափոխվել Ախուրյանի ձախափնյակ:

թ) Եվրոպական էթնիկական խմբեր: Ռուսական կայսրությանը միացվելուց հետո Կարսի մարզի տարածքում են հաստատվում ոչ միայն արևելյան սլավոններ ու հույներ, այլ նաև եվրոպական որոշ այլ էթնոսների ներկայացուցիչներ:

---

[1] «Памятные книжки и адрес-календарь Карсской области за 1906 г.», с. 1.

[2] **Хелмицкий П.,** ч. 2, I изд.,1893, с. 33. **Его же,** ч. 2, отд. III, II изд., 1897, с. 23.

[3] «Энциклопедический словарь Ф. А. Брокгауза и И. А. Ефрона», т. 14 А.

[4] Տե՛ս «Первая всеобщая перепись населения Российской империи 1897 г…», h. 2, էջ 38-39:

[5] Նույն տեղում, էջ 34-35:

[6] «Памятная книжка и адресъ календарь Карсской области на 1914 годъ», с. XXX.

Այսպես, 1880-ական թթ. առաջին կեսին մարզ են բերվում էստոնացիներ ու լեհեր, և նրանց քանակը 1886 թ. կազմում էր համապատասխանաբար ավելի քան 250 և 12[1]: 1890 թ. Կարսի մարզում հիմնվում է գերմանաբնակ բնակավայր[2]: Արդեն գոյություն ուներ էստոնաբնակ 1 բնակավայր[3]: 1890-ական թթ. շարունակվում է եվրոպական որոշ էթնոսների բնակեցումը մարզի տարածքում:

1897 թ. Կարսի մարզում բնակվում էին եվրոպական շուրջ մեկ տասնյակ էթնոսների ներկայացուցիչներ: Ստորև անդրադառնում ենք դրանցից յուրաքանչյուրին.

1. Լեհեր (3,24 հազար, 1,12 %[4]). 64,54 %-ը բնակվում էր Կարսի (կեսից ավելին՝ Կարս քաղաքում), 27,6 %-ը՝ Կաղզվանի շրջաններում: 99,51 %-ը կաթոլիկներ էին:
2. Լիտվացիներ (0,89 հազար, 0,31 %). 58,07 %-ը բնակվում էր Կարս քաղաքում: Ճնշող մեծամասնությունը կաթոլիկներ էին:
3. Էստոնացիներ (0,455 հազար, 0,16 %). 93,19 %-ը բնակվում էր Կարսի շրջանում: 79,34 %-ը լյութերանական քրիստոնյաներ էին, 20,22 %-ը՝ ուղղափառ:
4. Գերմանացիներ (0,43 հազար, 0,15 %). 68,37 %-ը բնակվում էր Կարսի շրջանում: 90,23 %-ը լյութերականներ էին, 6,28 %-ը՝ կաթոլիկ, 1,86 %-ը՝ ուղղափառ:
5. Լատիշներ (64). բնակվում էին հավասարապես Կարսի և Կաղզվանի շրջաններում: Ճնշող մեծամասնությունը լյութերականներ էին:
6. Մոլդովացիներ (47). 87,2 %-ը բնակվում էր Կարս քաղաքում. ուղղափառներ էին:
7. Չեխեր (11). բնակվում էին Կարսի շրջանում, Կաղզվանում և Օլթիում. կաթոլիկներ էին:

---

[1] «Свод статистических данных…», VII, с. 8.

[2] **Хелмицкий П.,** с. 24.

[3] Նույն տեղում:

[4] Փակագծերում նշվում է տվյալ էթնոսի տոկոսային մասնաբաժինը Կարսի մարզի բնակչության ընդհանուր թվի մեջ:

8. Ֆրանսիացիներ (4). բնակվում էին Կարսի և Արդահանի օկրուգներում. կաթոլիներ էին[1]:

Այսպիսով, Կարսի մարզում բնակվում էին եվրոպական էթնոսների շուրջ 5,15 հազար ներկայացուցիչներ (առանց հույների և արևելյան սլավոնների): Նրանց քանակը գրեթե անփոփոխ մնաց մինչև Ռուսական կայսրության փլուզումը, երբ նրանց ճնշող մեծամասնությունը հեռացավ մարզի տարածքից:

ժ) Էթնիկական այլ խմբեր: Կարսի մարզում բնակվում էին նաև էթնիկական այլ հանրությունների ներկայացուցիչներ: Ստորև անդրադառնում ենք միայն նրանց, որոնք ավելի քան 100 անհատով էին ներկայացված Կարսի մարզում:

1. Թաթարներ (2,35 հազար). բնակվում էին հիմնականում Կարսի և Կաղզվանի շրջաններում:
2. Հրեաներ (1,14 հազար). բնակվում էին հիմնականում Կարսի շրջանում, մասամբ էլ՝ Կաղզվան և Արդահան քաղաքներում:
3. Ասորիներ (585). բնակվում էին Կարսի շրջանում:
4. Պարսիկներ (568). բնակվում էին հիմնականում Կարսի և Արդահանի շրջաններում:
5. Վրացիներ (քարթվելական խմբերը միասին՝ 543). բնակվում էին Կարսի և Արդահանի շրջաններում:
6. Օսեր (520). հիմնականում Կարսի շրջանում էին:
7. Դաղստանցիներ (476). մեծ մասը Կարսի շրջանում էր:
8. Բաշկիրներ (207). բնակվում էին Կարսի շրջանում:
9. Գնչուներ (130). ճնշող մեծամասնությունը բնակվում էր Օլթիի շրջանի գյուղերում[2]:

Կարսի մարզում բնակվում էին նաև չեչեններ, ինգուշներ, չերքեզներ, կաբարդացիներ, թալիշներ, թաթեր, աբխազներ, մորդվաներ, կումիկներ, չուվաշներ և էթնիկական այլ խմբեր, որոնք չնչին թիվ էին կազմում:

---

[1] Տե՛ս «Первая всеобщая перепись населения Российской империи 1897 г…», հ. 2, էջ 34-39:

[2] Տե՛ս նույն տեղում:

ՎԵՐՁԱԲԱՆ

Մեր նպատակն էր Կարսի մարզի ժողովրդագրական պատմության ամբողջական վերհանումը, ինչի արդյունքում պարզեցինք, որ Կարսի մարզի տարածքում 1877-1920 թթ. տեղի են ունեցել բնակչության էթնիկական կազմի որոշակի փոփոխություններ:

Կարսի մարզը հյուսիսում և արևելքում սահմանակից էր Ռուսական կայսրության վարչամիավորներին (հյուսիս-արևմուտքում՝ Բաթումի մարզի Արդվինի և Բաթումի շրջաններին, հյուսիսում՝ Թիֆլիսի նահանգի Ախալցխայի գավառին, հյուսիս-արևելքում՝ Թիֆլիսի նահանգի Ախալքալաքի գավառին, արևելքում՝ Երևանի նահանգի Ալեքսանդրապոլի և Էջմիածնի գավառներին, հարավ-արևելքում՝ Երևանի նահանգի Սուրմալուի գավառին), իսկ հարավում և արևմուտքում՝ Օսմանյան կայսրությանը (Էրզրումի նահանգ), որի հետ սահմանն անցնում էր Հայկական պար ու Սողանլուղի լեռնաշղթաներով և Օլթի գետի միջին հոսանքով ու նրա վտակներով:

Կարսի մարզը, որ Ռուսական կայսրությունը նվաճել էր Օսմանյան կայսրությունից, ***հայկական տարածք է:*** Այն զբաղեցնում էր աշխարհացույցյան Մեծ Հայքի *Այրարատ աշխարհի* Վանանդ գավառն ամբողջությամբ, Գաբեղյանք, Արշարունիք, Աբեղյանք և Հավնունիք գավառների մեծագույն մասը, Շիրակ գավառի արևմտյան, Բասենի արևելյան և Աշոցքի արևմտյան հատվածները, *Գուգարքի* Արտահան գավառի մեծագույն մասը, *Տայքի* Կող և Բերդաց փոր գավառները, Պարտիզաց փոր և Ճակք գավառների կենտրոնական և արևելյան հատվածները, Բողխա և Ազորդաց փոր գավառների հյուսիսարևելյան մասերը: Ընդհանուր առմամբ՝ Կարսի մարզի տարածքը շուրջ 18,65 հազար կմ^2 էր:

Մեր ուսումնասիրությունը ցույց տվեց, թե ինչպես հաստատվեց Կարսի մարզի վարչատարածքային ընդհանուր բաժանումը՝ 6 վարչական շրջաններից (Կարսի, Կաղզվանի, Արդահանի, Օլթիի, Զարի-

շատի, Շորագյալի) վերաձևվելով 4-ի (Կարսի, Կաղզվանի, Արդահանի, Օլթիի):

Կարսի մարզի տարածքներից այժմ Հայաստանի Հանրապետությանն է պատկանում Շիրակի մարզի Ամասիայի տարածաշրջանը: Այստեղ բնակվում էին կարափափախներ, որոնք կազմեցին Խորհրդային Հայաստանի մահմեդական բնակչության մի մասը:

Առանձնապես մեծ կարևորություն են ներկայացնում Կարսի մարզի բնակչության, հատկապես՝ նրա էթնիկական կազմի փոփոխությունները: Այսպես, Կարսի մարզի գոյության մոտ 40 տարիների ընթացքում նրա բնակչության թիվն ավելացել է շուրջ 2,5 անգամ, ընդ որում՝ միայն հայերի քանակը՝ մոտ 6 անգամ:

Հարկ ենք համարում նշել, որ օսմանյան իշխանությունների ազգային-կրոնական ու սոցիալ-տնտեսական հայահալած քաղաքականության և 1829-1830 թթ. արևմտահայերի՝ Ռուսական կայսրության սահմաններ վերաբնակեցման հետևանքով մարզի հայ բնակչությունը, որ դարեր շարունակ կազմել էր այդ հայրենի տարածքի բնակչության բացարձակ մեծամասնությունը, մինչև 1877-1878 թթ. վերածվել է փոքրամասնության: Եվ միայն 1879-1915 թթ. մարզում հավաքվում է կոմպակտ հայություն:

Առաջին աշխարհամարտի նախօրյակին հայերը կազմում էին մարզի բնակչության մոտ մեկ երրորդ մասը (115 հազար մարդ): 1915 թ. հայերի թիվն անցնում է 123 հազարից: Փաստորեն, Կարսի մարզը, չնայած ցարիզմի գաղութային քաղաքականությանը և բնակչության էթնիկական խայտաբղետ կազմին, դարձել էր հայահավաքման օջախներից մեկը:

Հայ բնակչության թվի աճին զուգահեռ Կարսի մարզում հայտնվում են եվրոպական և այլ բազմաթիվ էթնոսների ներկայացուցիչներ, որոնք նախկինում երբևէ մարզի տարածքի բնակչության մասը չէին կազմել: Այսպես, առաջնորդվելով սեփական գաղութային շահերով, Ռուսական կայսրության իշխանությունները կազմակերպում են որոշակի թվով ռուսների, հույների, ուկրաինացիների, լեհերի, լիտվացիների, գերմանացիների, էստոնացիների, բելառուսների և այլ էթ-

նոսների վերաբնակեցումը Կարսի մարզում: Նրանք պետք է դառնային ռուսական կենտրոնական իշխանությունների էթնիկական հենարանը նոր նվաճված գաղութում: Այնուհանդերձ, այս վերաբնակիչները խոր արմատներ չգցեցին Կարսի մարզում՝ Ռուսական կայսրության փլուզումից և թուրքական երկու արշավանքներից հետո լքելով մարզի տարածքը: Ցավոք, հայերը ևս ստիպված եղան թուրքական բռնազավթման պատճառով հեռանալ Կարսի մարզից:

Աղյուսակ 6-ում ներկայացված է Կարսի մարզի բնակչության էթնիկական կազմը՝ հիմք ընդունելով 1897 թ. մարդահամարի տվյալների հիման վրա մեր կատարած ուսումնասիրությունը.

Աղյուսակ 6

N	***Էթնիկական հանրությունը***	***Թիվը (հազ. մարդ)***	***%***
1.	Հայեր	73,41	25,26
2.	Թուրքեր	63,55	21,86
3.	Քրդեր	39,66	13,65
4.	Հույներ	32,59	11,21
5.	Կարապափախներ	29,88	10,28
6.	Ռուսներ	22,33	7,68
7.	Թուրքմեններ	8,44	2,9
8.	Ուկրաինացիներ	5,28	1,82
9.	Եզդիներ	3,31	1,14
10.	Լեհեր	3,24	1,12
11.	Թաթարներ	2,35	0,81
12.	Հրեաներ	1,14	0,39
13.	Լիտվացիներ	0,89	0,31
14.	Ասորիներ	0,59	0,2
15.	Պարսիկներ	0,57	0,2
16.	Վրացիներ[1]	0,54	0,19
17.	Օսեր	0,52	0,18
18.	Դաղստանցիներ	0,48	0,17
19.	Էստոնացիներ	0,46	0,16
20.	Գերմանացիներ	0,43	0,15
	Էթնիկական այլ խմբեր	0,99	0,32
	Ընդհանուր	***290,65***	***100***

[1] Քարթվելական էթնիկ բոլոր խմբերը միասին վերցրած:

Այսպիսով, Կարսի մարզի էթնիկական հանրություններից վեցը՝ հայերը, թուրքերը, քրդերը, հույները, կարափափախներն ու ռուսները, միասին կազմում էին բնակչության շուրջ 90 %-ը:

Կարսի մարզի բնակչության էթնիկական կազմին զուգահեռ առանձնակի հետաքրքրություն է ներկայացնում նաև մարզի բնակչության սեռատարիքային կազմը: Մարզի բնակչության մեջ տղամարդիկ էին գերակշռում, իսկ տարիքային խմբերից՝ մանուկներն ու երիտասարդները:

Խայտաբղետ էր նաև մարզի բնակչության կրոնական կազմը: Եթե 19-րդ դարի սկզբին Հայաստանյայց Առաքելական Սուրբ եկեղեցու հետևորդները կազմում էին բնակչության երկու երրորդ մասից ավելին, ապա նույն դարի ընթացքում վերոնշյալ գործընթացների հետևանքով պատկերը փոխվում է: 1897 թ. դրությամբ քրիստոնյաները կազմում էին բնակչության 48,42 %-ը (Հայաստանյայց Առաքելական Սուրբ եկեղեցու հետևորդներ՝ 24,5 %, հայ կաթոլիկներ՝ 0,63 %, ուղղափառներ՝ մոտ 17 %, կաթոլիկներ (հռոմ.)՝ 1,5 %, բողոքականներ (90 %-ից ավելին՝ լյութերականներ)՝ 0,42 %, նեստորականներ՝ 0,1 %, աղանդավորներ՝ 4,27 %), մահմեդականները՝ շուրջ 50 %-ը (այդ թվում՝ սուննի՝ շուրջ 40 %, շիա՝ շուրջ 7 %, ալևիներ՝ 2,9 %), եզդիները՝ 1,14 %-ը, հուդայականները՝ 0,41 %-ը ևն[1]:

Առաջին աշխարհամարտի նախօրյակին քրիստոնյաները քանակապես արդեն մի փոքր գերազանցում էին մահմեդականներին, և այս երկու կրոններից յուրաքանչյուրի հետևորդները կազմում էին բնակչության համապատասխանաբար 51,1 %-ը և 47,5 %-ը:

Այսպիսով, Կարսի մարզի գոյության շուրջ 40 տարիների ընթացքում նրա բնակչության թիվը և էթնիկական ու կրոնական կազմը զգալի փոփոխություններ են կրել, ինչը հիմնականում պայմանավորված էր մարզի՝ ռուսական իշխանությունների կողմից որպես գաղութ դիտարկվելու հանգամանքով:

[1] Տե՛ս «Первая всеобщая перепись населения Российской империи 1897 г…», հ. 2, էջ 34-39:

КАРССКАЯ ОБЛАСТЬ В 1877-1917 ГГ.
(РЕЗЮМЕ)

Карсская область сформировалась вследствие русско-турецкой войны 1877-1878 гг., когда Российской империи отошли несколько исторических армянских территорий – район г. Карс, часть Басена и большая часть района Чалдырь. До конца 1820-х гг. армяне составляли подавляющее большинство (ок. 95 %) населения территории Карсской области. Однако политика Османской империи и вынужденная эммиграция большинства армянского населения привели к тому, что этносы – последователи ислама составили большинство населения.

В течении почти 40-летнего существования Карсской области (1877-1917 гг.) наблюдались изменения в этническом составе населения. Армяне стали массово переселяться из Западной Армении, опять став первым по численности этносом в области. Руководствуясь собственными колониальными интересами, власти Российской империи организовали переселение этнических групп (восточные славяне, греки, поляки, литовцы, немцы, эстонцы и др.), которые должны были стать этнической опорой для российских центральных властей в завоёванной колонии. Итак, в 1880 г. начинается процесс заселения Карсской области восточными славянами и другими «преданными» этносами, чьи представители сразу же получали государственно-правовой статус, зачисляясь как постоянное население области. Переселению подвергались сектанты (молоканы и духоборы), а также несколько тысяч православных русских и украинцев из центральных губерний Российской империи. По данным Первой всеобщей переписи населения Российской империи 1897 г., в области проживали 27,86 тыс. представителей восточнославянских этносов: русские – 80,15 % (22,33 тыс. чел.) восточных славян, украинцы - 18,95 % (5,28 тыс. чел.), белорусы - 0,9 % (0,25 тыс. чел.).

Для изучения истории армянского народа очень важным обстоятельством является то, что Карсская область стала одним из регионов национальной консолидации армян. Покинув свои дома в Западной Ар-

мении из за массовых этнических чисток султана Абдул-Хамида II в 1894-1896 гг., армяне иммигрировали в Карсскую область. Однако, колониальная политика Российской империи не позволяла армян сразу приобрести статус постоянного жителя, и до развала Российской империи (1917 г.) армяне составляли больше половины всего временно проживающего населения области. Несмотря на эту политику России, численность армянского населения постоянно увеличивалась: если в 1878 г. в области проживало 23 тыс. армян, то накануне Первой Мировой Войны – 115 тыс., а в 1915 г. – 123 тыс.. После развала Российской империи и двух турецких нашествий (1918 и 1920 гг.) армяне, греки и русские покинули Карсскую область.

Проведённое исследование показало, что накануне начала Первой Мировой Войны армяне, восточные славяне, греки и другие христианские этносы составляли 51,1 % населения области. Христиане (исключительно армяне) составляли большинство населения территории Карсской области до 1830 г. и после 74-летнего перерыва в 1914 г. они опять начали преобладать.

Ниже представлены самые многочисленные этносы в Карсской области по данным переписи населения 1897 г.:

N	***Этническая общность***	***Числ. (тыс. чел.)***	***%***
1.	**Армяне**	**73,41**	**25,26**
2.	**Турки**	**63,55**	**21,86**
3.	**Курды**	**39,66**	**13,65**
4.	**Греки**	**32,59**	**11,21**
5.	**Карапапахи**	**29,88**	**10,28**
6.	**Русские (великорусы)**	**22,33**	**7,68**
7.	**Туркмены**	**8,44**	**2,9**
8.	**Украинцы (малорусы)**	**5,28**	**1,82**
9.	**Езиды**	**3,31**	**1,14**
10.	**Поляки**	**3,24**	**1,12**
	Другие этносы	**8,96**	**3,08**
	Всего	***290,65***	***100***

KARS OBLAST IN 1877-1917
(SUMMARY)

Kars oblast (province) was formed after the war between the Russian and Ottoman Empires in 1877-1878, when a number of historical Armenian territories (the region of the city of Kars, most of Chaldyr, and a part of Basen) became a part of the Russian Empire. Armenians were the overwhelming majority (about 95%) of the population of the territory of Kars Oblast until the end of the 1820s. However, as a result of the the Ottoman policy, Muslim ethnic groups became the major ethnic elements of the population, and simulteniously caused emigration of the Armenian population.

In order to have an ethnic fundament in Kars oblast, the Russian authorities organized a resettlement of several thousands of Eastern-Slavic (mainly-Russian), Greek, and Polish population to Kars oblast. A number of representatives of other European ethnic groups (Lituanians, Estonians, Germans, Belorussians, etc.) were resettled to Kars oblast. Simulteneously, Armenian population began to return to their homeland, becoming the major ethnic group in the oblast again. The number of Armenians rose from 23 thousand in 1878 to 123 thousand in 1915, according to the Russian official statistics. However, Russian officials, following their colonial national policy, did not give most of Armenians the right of permanent settlement, granting only an interim certificate. Therefore, Armenians always made more than the half of the temporary population of the oblast. Their number strongly increased during the period of Sultan Abdul-Hamid II's massacres in the Ottoman Empire (1894-1896).

Our research showed that Christian population (mainly Armenians, Greeks, and Russians) became the majority (51,1 %) of the population before the break-out of World War I. However, they had to leave the territory of Kars oblast after the crash of the Russian Empire (1917) and two Turkish campaignes (1918, 1920) against the First Republic of Armenia.

Below you can see the ethnic groups with the largest number of representatives in Kars oblast, according to the First Russian census in 1897:

N	*Ethnic groups*	*People (in thousands)*	*%*
1.	**Armenians**	**73,41**	**25,26**
2.	**Turks**	**63,55**	**21,86**
3.	**Kurds**	**39,66**	**13,65**
4.	**Greeks**	**32,59**	**11,21**
5.	**Karapapakhs**	**29,88**	**10,28**
6.	**Russians**	**22,33**	**7,68**
7.	**Turkmens**	**8,44**	**2,9**
8.	**Ukrainians**	**5,28**	**1,82**
9.	**Yazidis**	**3,31**	**1,14**
10.	**Poles**	**3,24**	**1,12**
	Other ethnic groups	**8,96**	**3,08**
	Total	***290,65***	***100***

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ՍԿԶԲՆԱՂԲՅՈՒՐՆԵՐԻ ԵՎ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

ա) ՍԿԶԲՆԱՂԲՅՈՒՐՆԵՐ

1. **Աբրահամ Կրետացի,** Պատմութիւն անցիցն իւրոց և Նատրշահին Պարսից, քննական բնագիր, ռուսերեն թարգմանությունը, առաջաբանը և ծանոթագրությունները՝ Ն. Ղորղանյանի, Երևան, 1973:
2. **Առաքել Դավրիժեցի,** Պատմություն, թարգմանությունը, առաջաբանը և ծանոթագրությունները՝ Վ. Առաքելյանի, Երևան, 1988:
3. **Երեմիա Տևկանց,** Ճանապարհորդություն Բարձր Հայք և Վասպուրական 1872-73 թթ., ծանոթագր.՝ Հ. Մ. Պողոսյան, Երևան, 1991:
4. **Կյուրեղ վրդ. Սրապյան,** Ստորագրութիւն Կարսի շրջակայ գիւղօրէից եւ վանօրէից 1878, «ԲՀԱ», Երևան, 1970, թիվ 2, էջ 89-124:
5. «Հայաստանը միջազգային դիվանագիտության և սովետական արտաքին քաղաքականության փաստաթղթերում (1828-1923 թթ.)», խմբ.՝ Ջ. Կիրակոսյանի, Երևան, 1972:
6. «Кавказский календарь на 1902 г.», Тифлис, 1901.
7. «Кавказский календарь на 1913 г.», Тифлис, 1912.
8. «Кавказский календарь на 1914 г.», Тифлис, 1913.
9. «Кавказский календарь на 1915 г.», Тифлис, 1914.
10. «Кавказский календарь на 1916 г.», Тифлис, 1915.
11. «Кавказский календарь на 1917 г.», Тифлис, 1916.
12. «Памятные книжки и адрес-календарь Карсской области», Карсъ, 1901-1914.
13. «Первая всеобщая перепись населения Российской империи 1897 г., LXIV, Карсская область», Санкт-Петербург, т. 1-2, 1900-1904.

14. «Свод статистических данных о населении Закавказского края, извлеченных из посемейных списков 1886 г.», Тифлис, 1893, VII.

Բ) ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. **Զուլալյան Մ.,** Արևմտյան Հայաստանը 16-18-րդ դդ., Երևան, 1980:
2. **Հակոբյան Ա.,** Կարսի մարզի ազգաբնակչությունը (1897-1914 թթ.), «ՊԲՀ», Երևան, 1976, թիվ 4, էջ 147-154:
3. **Հակոբյան Ա.,** Կարսի մարզ (գյուղացիության պատմության ուրվագծեր), Երևան, 2000:
4. «Հայ ժողովրդի պատմություն», ՀԽՍՀ ԳԱ հրատ., հ. VI, Երևան, 1981:
5. «Հայաստանի բնաշխարհ» հանրագիտարան, Երևան, 2006:
6. «Հայկական սովետական հանրագիտարան», հ. 5, Երևան, 1979:
7. **Հարությունյան Բ.,** Ալեքսանդրապոլի և Մոսկվայի պայմանագրերի համադրական քննության շուրջ, «ՊԲՀ», 2011, թ. 3, էջ 51-61:
8. **Մալխասյան Մ.,** Օսմանյան կայսրության և Սեֆյան տերության առաջացումն ու հզորացումը. Հայաստանը 15-17-րդ դարերում, «Քրիստոնյա Հայաստան», Ս. Էջմիածին, 2010, թիվ 16:
9. **Մելքոնյան Ա.,** Էրզրում. Էրզրումի նահանգի հայ ազգաբնակչությունը 19-րդ դարի առաջին երեսնամյակին (պատմաժողովրդագրական ուսումնասիրություն), Երևան, 1994:
10. **Մուրադյան Հ.,** Ժողովրդագրական տեղաշարժերը Կարսի նահանգում XVI-XIX դարի առաջին կեսին, «Պատմության հարցեր», հ. 5, Երևան, 2005, էջ 61-76:
11. **Մուրադյան Հ.,** Կարսի նահանգի վարչաժողովրդագրական նկարագիրը 19-րդ դարի առաջին երեսնամյակին, Երևան, 2006:

12. **Սահակյան Լ.,** Տեղանունների թուրքացումն Օսմանյան կայսրությունում և հանրապետական Թուրքիայում, Մոնրեալ, 2010:
13. **Սրվանձտյան Գ.,** Երկեր, հ. 2, Երևան, 1982:
14. **Амбарян А.,** Численность и национальный состав «временно-проживающих» в Закавказье и Восточной Армении в 1914 г., «ВОН», Ереван, 1979, N 8, с. 38-45.
15. «Большая советская энциклопедия», т. 4, Москва, 1971.
16. **Ерицов А.,** Список населенных пунктов бывшей Эрзерумской области, находившейся во временном управлении России, «Известия Кавказского отдела», т. 8, Тифлис, 1884-85.
17. **Малама Я.,** Описание Эрзерумского вилайета, Санкт-Петербург, 1874.
18. **Малхасян М.,** Восточно-славянское население Карсской области в 1878-1917 гг., «Материалы Международного молодежного научного форума «Ломоносов-2011», Москва, 2011.
19. **Погосян А.,** Карсская область в составе России, Ереван, 1983.
20. **Хелмицкий П.,** Карсская область, военно-статистический и географический обзор, ч. 2, Тифлис, 1893.
21. **Хелмицкий П.,** Карсская область, военно-статистический и географический обзор, ч. 2, II исправленное издание Отдела Генерального Штаба Кавказского Военного округа, Тифлис, 1897.
22. «Энциклопедический словарь Ф. А. Брокгауза и И. А. Ефрона», Т. 14 А (28) , Санкт-Петербург, 1895.
23. **Melkonyan A.,** The Kars Oblast' 1878-1918: Establishment of Russian Rule, «Հայաստանի պատմության և ժողովրդագրության հիմնահարցեր», Երևան, 2011:

գ) ՔԱՐՏԵԶՆԵՐ

1. «Հայաստանի ազգային ատլաս», հ. Բ, Երևան, 2008.
   ա) «Հայաստանն ըստ «Աշխարհացոյց»-ի», հեղինակ՝ Բ. Հարությունյան, էջ 30-31, մասշտաբ՝ 1:2 300 000:
   բ) «Հայերի բռնագաղթը Շահ-Աբաս I-ի կողմից Պարսկաստան XVII դ. սկզբին», հեղինակ՝ Գ. Բաղալյան, էջ 51, մասշտաբ՝ 1:4 000 000:
   գ) «Արևելյան Հայաստանը XX դ. սկզբին (1901 - 1914 թթ.)», հեղինակ՝ Բ. Հարությունյան, էջ 82, մասշտաբ՝ 1:1 600 000:
2. Планшеты 5-верстовой карты Карсской области, масштаб – 1:210000, Ростов-на-Дону, 1922.

ՀԱՎԵԼՎԱԾ

ԿԱՐՍԻ ՄԱՐԶԻ ՎԱՐՉԱՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԲԱԺԱՆՈՒՄԸ ԱՌԱՋԻՆ ԱՇԽԱՐՀԱՄԱՐՏԻ ՆԱԽՕՐՅԱԿԻՆ

ա) ԿԱՐՍԻ ՇՐՋԱՆ

Տարածքը[1]՝ 5 797,07 կմ^2

Բնակչությունը՝ 134,14 հազար (1897 թ.), 176,3 հազար (1914 թ.)

Վարչական կենտրոնը՝ ք. Կարս (25 252 հայ)[2]

Ոստիկանական տեղամասերը՝

1. **Կարսի.**
   վարչական կենտրոնը՝ ք. Կարս
   տարածքը՝ 1 396,86 կմ^2
   գյուղական շրջանների քանակը՝ 8
   գյուղական համայնքների քանակը՝ 22
   բնակավայրերի քանակը՝ 53
   հայաբնակ գյուղերը[3]՝ Բեկլի Ահմեդ (1 890 հայ), Բերնա (1 198), Բոզղալա (153), Բուլանըխ (436), Գյարմալի (485), Գյուդալի (444), Դաշկովո (759), Զայիմ (307), Խանիքյոյ (Խա-

---

[1] Քառակուսի կիլոմետրերով հաշվարկն ինքներս ենք կատարել:

[2] Տրված է քաղաքների հայ առկա բնակչության թիվը 1914 թ. հունվարի 1-ի դրությամբ՝ ներառյալ «ժամանակավորապես բնակվող» հայերի թիվը (Տե՛ս «Кавказский календарь на 1915 г.»):

[3] Հայաբնակ գյուղերի ցանկը և նրանց մշտական հայ բնակչության թիվը (առանց «ժամանակավորապես բնակվող» հայերի թվի) տրված են 1913 թ. հունվարի 1-ի դրությամբ (Տե՛ս «Памятная книжка и адресъ календарь Карсской области на 1914 годъ», էջ I-XXXVIII):

նիգեղ, Ղանի, 1 009), Խաս Չիֆթլիկ (336), Խափանլի (Խոթանլի, 430), Կարախաչ (270), Հերմալի (Ջերմոց, Գյարմալի, Չերմալի, 485), Ղարաղալա (Հայկաշեն, 4 389), Մացրա (Մասրա, 1 175), Նորաշեն (364), Չըղըրղան (454), Սոգյութլի-Աբադ (298), Օրթա Քիլիսա (667)

2. **Սողանլուղի.**
   վարչական կենտրոնը՝գք. Սարիղամիշ
   տարածքը՝1 188,18 կմ^2
   գյուղական շրջանների քանակը՝3
   գյուղական համայնքների քանակը՝10
   բնակավայրերի քանակը՝51
   հայաբնակ գյուղերը՝ Բայբուրդ (916), Բայկարա (483), Դոլբանտ (855), Էսքի Ղազի (Ասքիղազ, 588), Սոգյութլի Պրուտ (432), Օրթաղալա (499)
3. **Աղբաբայի.**
   վարչական կենտրոնը՝գ. Ամասիա
   տարածքը՝661,17 կմ^2
   գյուղական շրջանների քանակը՝2
   գյուղական համայնքների քանակը՝10
   բնակավայրերի քանակը՝25
   հայաբնակ գյուղերը՝ Բեզիրգյան (357), Ղարամահմեդ (622)
4. **Զարիշատի.**
   վարչական կենտրոնը՝ գ. Գրենադերսկոյե (Գրենադերսկ, Զարիշատ)
   տարածքը՝1 256,55 կմ^2
   գյուղական շրջանների քանակը՝5
   գյուղական համայնքների քանակը՝20
   բնակավայրերի քանակը՝57

հայաբնակ գյուղերը՝ Աղջաղալա (600), Քյադիկ Սաթըլմըշ (794), Փոքր Պարգետ (530)

5. **Շորագյալի.**

վարչական կենտրոնը՝ գ. Ղըզըլ-Չախչախ

տարածքը՝ 1 151,45 կմ^2

գյուղական շրջանների քանակը՝ 3

գյուղական համայնքների քանակը՝ 23

բնակավայրերի քանակը՝ 57

հայաբնակ գյուղերը՝ Աշաղա-Քադըքլար (Ներքին Գետիկ, 647), Աջամ-Մավրակ (Շիրակաշատ, 502), Արազ-օղլի (Արազի, Մարգեր, 532), Բայրախտար (538), Բաշ Շորագյալ (Շիրակավան, 1 601), Բաշքադըքլար (Վերին Գետիկ, 1 065), Գերխանա (880), Թազաքենդ (Նորաշեն, 245), Կարմիր վանք (352), Կույուջուկ (343), Համզագարակ (1 138), Հայկական Աղուզում (406), Հայկական Տիգնիս (Հին Թիխնիս, 290), Ղըզըլչախչախ (2 243), Ղոշավանք (Հոռոմոս, 357), Ճալա (1 131), Մեծ Պարգետ (811, նաև 396 թուրք), Նոր Տիգնիս (620), Ուզունքիլիսա (1 328), Փալդըրվան (1 183), Փիրվալի (1 068), Քյուրուք-Դարա (1 216), Օղուզլի (Ուղուզլու, 1 028), Օջախ ղուլի (952), Օրթա Քադըքլար (Միջին Գետիկ, 540):

բ) ԿԱՂԶՎԱՆԻ ՇՐՋԱՆ

Տարածքը՝ 4 373,77 կմ^2
Բնակչությունը՝ 59,23 հազար (1897 թ.), 80,7 հազար (1914 թ.)
Վարչական կենտրոնը՝ բ. Կաղզվան (8 554 հայ)
Ոստիկանական տեղամասերը՝

1. **Կաղզվանի.**
   վարչական կենտրոնը՝ բ. Կաղզվան
   տարածքը՝ 1 404,14 կմ^2
   գյուղական շրջանների քանակը՝ 5
   գյուղական համայնքների քանակը՝ 14
   բնակավայրերի քանակը՝ 44
   հայաբնակ գյուղերը՝ Ենիջա (173), Թոդան (8, ռուս աղանդավորներ՝ 77), Խար (762), Ղարաբաղ (1 046), Ղարավանք (439), Չանկլի (Եղեգնամուտ, 790), Քերս (Արտագերս, 972)
2. **Նախիջևանի.**
   վարչական կենտրոնը՝ գ. Տեկոր
   տարածքը՝ 1 358,99 կմ^2
   գյուղական շրջանների քանակը՝ 4
   գյուղական համայնքների քանակը՝ 15
   բնակավայրերի քանակը՝ 64
   հայաբնակ գյուղերը՝ Ագրակ (Ագարակ, 665), Բագրան (Բագարան, 796), Ելիսավետինսկոյե (332), Ձըռչի (1 526), Ծբնի (1 643), Հայկական Բվիկ (719), Փոքր (Լալոյ) Մավրակ (537),

(Փոքր) Նախիջևան (2 127), Ջալալ (396), Տեկոր (Տիկոռ, 572, թուրքեր՝ 191)

3. **Խորասանի.**

վարչական կենտրոնը՝գ. Ղարաղուրտ

տարածքը՝1 610,63 կմ^2

գյուղական շրջանների քանակը՝2

գյուղական համայնքների քանակը՝15

բնակավայրերի քանակը՝36

հայաբնակ գյուղերը՝ Աղքիլիսե (567, հայ կաթոլիկներ), Արմութլի (Տանձուտ, 1 141), Բաշգեղ (2 393), Գյուլանթափա (Գիլանթափ, 467, քրդեր՝ 579), Խոփերան (564), Ձիթաղան (Սըթահան, Ձիթահանք, 872), Ղոշաքիլիսե (590), Շադևան (657), Չուրուկ (412):

գ) ԱՐԴԱՀԱՆԻ ՇՐՋԱՆ

Տարածքը՝ 5 604,84 կմ^2

Բնակչությունը՝ 65,76 հազար (1897 թ.), 94,1 հազար (1914 թ.)

Վարչական կենտրոնը՝ ք. Արդահան (2 063 հայ)

Ոստիկանական տեղամասերը՝

1. **Արդահանի.**
   վարչական կենտրոնը՝ ք. Արդահան
   տարածքը՝ 1 820,62 կմ^2
   գյուղական շրջանների քանակը՝ 5
   գյուղական համայնքների քանակը՝ 26
   բնակավայրերի քանակը՝ 79
   հայաբնակ գյուղերը՝ չկան
2. **Գյոլեի (Գյոլի, Կողի).**
   վարչական կենտրոնը՝ գ. Թախտաղռան
   տարածքը՝ 2 105,05 կմ^2
   գյուղական շրջանների քանակը՝ 5
   գյուղական համայնքների քանակը՝ 22
   բնակավայրերի քանակը՝ 74
   հայաբնակ գյուղերը՝ Օկամ (Հոկամ, 32, քրդեր՝ 196, թուրքեր՝ 194), Ուռուտ (Հուռութ, 266)
3. **Չըլդըրի.**
   վարչական կենտրոնը՝ գ. Զուրզունա
   տարածքը՝ 1 102,81 կմ^2
   գյուղական շրջանների քանակը՝ 2
   գյուղական համայնքների քանակը՝ 15

բնակավայրերի քանակը՝46
հայաբնակ գյուղեր չկան

4. **Փոցխովի.**
վարչական կենտրոնը՝գ. Դիգուր
տարածքը՝576,37 կմ^2
գյուղական շրջանների քանակը՝2
գյուղական համայնքների քանակը՝29
բնակավայրերի քանակը՝56
հայաբնակ գյուղեր չկան

դ) ՕԼԹԻԻ ՇՐՋԱՆ

Տարածքը՝ 2 983,17 կմ^2

Բնակչությունը՝ 31,52 հազար (1897 թ.), 40,1 հազար (1914 թ.)

Վարչական կենտրոնը՝ գք. Օլթի (2 188 հայ)

Ոստիկանական տեղամասերը՝

1. **Օլթիի.**
   վարչական կենտրոնը՝գք. Օլթի
   տարածքը՝2 149,63 կմ^2
   գյուղական շրջանների քանակը՝3
   գյուղական համայնքների քանակը՝10
   բնակավայրերի քանակը՝94
   հայաբնակ գյուղերը՝ Ագարակ (401), Բերդուս (626), Զարդանես (211), Թամրուտ (425), Ղուբաղ Էրյուկ (176), Ջուչուրուս (Ջուրջուրուս, Ջուրջուռիս, 499)
2. **Թաուսքյարի (Թավուսքարի, Տայոց քարի).**
   վարչական կենտրոնը՝գ. Օլոր
   տարածքը՝833,54 կմ^2
   գյուղական շրջանների քանակը՝2
   գյուղական համայնքների քանակը՝7
   բնակավայրերի քանակը՝53
   հայաբնակ գյուղը՝ Օլոր (188)

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Ներածություն 4

Գլուխ Ա. Կարսի մարզի տարածքը, սահմաններն
ու վարչատարածքային բաժանումը.....8

Գլուխ Բ. Կարսի մարզի բնակչությունը..... 16

- Ժողովրդագրական գործընթացները
մինչև Կարսի մարզի ստեղծումը..... 16
- Մարզի բնակչությունը 1878-1917 թթ. 25
- Ուրբանիզացման մակարդակը 30
- «Ժամանակավորապես բնակվող բնակչությունը» 30
- Սեռատարիքային կազմը 34
- Էթնիկական կազմը 36
  - Հայեր..... 36
  - Ռուսներ..... 41
  - Թուրքեր 46
  - Քրդեր 51
  - Հույներ 51
  - Կարափափախներ 54
  - Թուրքմեններ 55
  - Եզդիներ 56
  - Եվրոպական էթնիկական խմբեր 56
  - Էթնիկական այլ խմբեր..... 58

Վերջաբան..... 59

Карсская область (резюме) 63

Kars oblast (summary) 65

Օգտագործված սկզբնաղբյուրների և գրականության ցանկ 67

Հավելված 71

ՄԻՔԱՅԵԼ ՄԱԼԽԱՍՅԱՆ

ԿԱՐՍԻ ՄԱՐԶԻ ԲՆԱԿՉՈՒԹՅՈՒՆԸ

Գիտ. խմբագիրներ՝
ասիստ. Գեղամ Բադալյան
պ. գ. թ., դոց. Հովիկ Գրիգորյան

Խմբագիր՝
Լենա Ասրյան

Համակարգչային շարվածքը՝
Միքայել Մալխասյանի

Տպագրված է Time to Print օպերատիվ տպագրությունների սրահում
ք. Երևան, Խանջյան 15/55

Չափը՝ 60x84 1/16: Ծավալը՝ 5 մամուլ:
Տպաքանակը՝ 100 օրինակ:

ԵՊՀ հրատարակչություն

ք. Երևան, 0025, Ալեք Մանուկյան 1